

ԶՈՎՈՒՆԻՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ԹԱՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ  
ՆԱԽԱԳԾԻ



Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ  
(լրամշակված)

Կառուցապատող և Ձեռնարկող՝  
«Մազնոյիա Կոնֆորտ» ՄՊԸ

Տնօրեն

Ա. Ավետիսյան

ԵՐԵՎԱՆ 2021

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ ..... 4

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 5

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 6

2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ..... 6

    2.1 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը ..... 6

    2.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի կազմը ..... 7

    2.3 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը ..... 7

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ..... 7

4 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ..... 9

    4.1 Նախագծային և տեխնոլոգիական լուծումները ..... 13

    4.2 Բարեկարգում և կանաչապատում ..... 18

    4.3 Ջրամատակարարում և ջրահեռացում ..... 21

    4.4 Գազամատակարարում էլեկտրասնուցում..... 21

    4.5 Աձրևաջրերի հեռացում /հեղեղատար կոյուղի/ ..... 22

    4.6 Շինարարական աշխատանքների կազմակերպում ..... 22

    4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում ..... 26

5 ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ..... 27

    5.1 Տեղանքի ռելիեֆը և երկրաբանությունը ..... 27

    5.2 Սեյսմիկ բնութագրերը ..... 27

    5.3 Բնակլիմայական պայմաններ..... 28

    5.4 Բնության հատուկ պահպանվող տարածքներ և պատմամշակութային հուշարձաններ ..... 30

    5.5 Օդային ավազան..... 31

    5.6 Հողային ռեսուրսները և հողօգտագործումը ..... 32

    5.7 Ջրային ռեսուրսներ ..... 33

    5.8 Տարածաշրջանի կենսաբազմազանությունը ..... 34

- 6 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ .....35
  - 6.1 Շինարարության փուլ..... 35
    - 6.1.1 Օղային ավազանի աղտոտվածություն և մեղմացման միջոցառումները..... 36
    - 6.1.2 Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում ..... 37
    - 6.1.3 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն..... 38
    - 6.1.4 Թափոնների առաջացում և կառավարում ..... 39
    - 6.1.5 Ազդեցություն բուսական աշխարհի վրա և մեղմացման միջոցառումները..... 42
    - 6.1.6 Սոցիալական ազդեցությունները և մեղմացումը..... 42
    - 6.1.7 Երթևեկության վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումները ..... 43
    - 6.1.8 Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները..... 43
    - 6.1.9 Աշխատանքի անվտանգության և հակահրդեհային միջոցառումներ..... 44
- 7 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....46
  - 7.1 Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները..... 46
  - 7.2 Մոնիտորինգ..... 48
- 8 ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ .....57
- 9 ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....58
- 10 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....59
  - 10.1 Հավելված 1. Ճարտարապետահատակագծային առաջադրանք ..... 59
  - 10.2 Հավելված 2. Շինմոնտաժային աշխատանքների հաջորդականությունը և ժամանակացույցը 63
  - 10.3 Հավելված 3. Անշարժ գույքի սեփականության վկայական..... 64
  - 10.4 Հավելված 4. Բնապահպանական մեղմացնող միջոցառումների մոնիտորինգի պլան ..... 66
  - 10.5 Հավելված 5. Հանրային քննարկումների հայտարարություն, մասնակիցների ցանկ և արձանագրություն..... 69
  - 10.6 Հավելված 6. Զովունիի քաղաքապետարանի նախնական համաձայնությունը ..... 76
  - 10.7 Լրամշակումների վերաբերյալ ամփոփ տեղեկագիր ..... 77

## Հապավումներ

ԲՄԾ	Բնապահպանական միջոցառումների ծրագիր
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր
ՆԳՀ	Նախնական գնահատման հայտ
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում
ՀՄԿ	Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՇԿՆ	Շինարարության կազմակերպման նախագիծ

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Գործունեության անվանումը	Զովունիում բնակելի թաղամասի կառուցում
Կառուցապատող	«Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ
Փորձաքննական գործընթացի ձեռնարկող	«Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ
Նախագծային կազմակերպություն	«ՌԵՖՕՐՄ» ճարտարապետական արվեստանոց
Ձեռնարկողի հասցե	ՀՀ ք Երևան, Կոնդ 44
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ	Էլ. Փոստ՝ <a href="mailto:ecercaucasus@gmail.com">ecercaucasus@gmail.com</a> , <a href="mailto:2201100@gmail.com">2201100@gmail.com</a> Հեռ.՝ (+374 98) 131471, (+374 91) 190000
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ, ԿՈՏԱՅՔԻ մարզ, Եղվարդ համայնք, գ. Զովունի 6-րդ փողոց 21
Հողատարածքի մակերեսը	3.327 հա
Կառուցապատման մակերեսը	7467.0 ք.մ (22.4%)
Շինությունների ստորգետնյա մասի մակերես	20504.0ք.մ
Շինությունների վերգետնյա մասի մակերես	72085.0ք.մ
Բնակելի մասի մակերես	56226.0ք.մ
Հասարակական մասի մակերես	1935.0ք.մ
Կանաչապատման մակերես	15120.0 ք.մ (45.4%)
Բնակելի շենքի հարկայնությունը	9-13 վերգետնյա և մինչև 3 ստորգետնյա հարկեր՝ համաձայն առկա ճարտարապետահատակագծային առաջադրանքի: Որոշ մասնաշենքերի դեպքում հնարավոր է մինչև 15 վերգետնյա հարկ, կախված ընթացիկ երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքներից: Այդ արդյունքներից կախված, կառուցապատողը հարկ եղած դեպքում կձեռնարկի նոր ճարտարապետահատակագծային առաջադրանքի ձեռքբերման գործընթաց:
Բնակարանների ընդհանուր թիվը	810
Բացօթյա ավտոկայանատեղի	199 հատ
Ստորգետնյա ավտոկայանատեղի	393 հատ

# 1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բնակելի թաղամասի կառուցման աշխատանքները նախատեսվում է իրականացնել ՀՀ, ԿՈՏԱՅՔԻ մարզ, Եղվարդ համայնք, գ. Զովունի 6-րդ փողոց 21 հասցեում:

Բնակելի թաղամասի նախագծային աշխատանքների պատվիրատուն հանդիսանում է «Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ-Ն (այսուհետ՝ Կառուցապատող), իսկ նախագծային աշխատանքներն իրականացվել են «ՌԵՃՕՐՄ»-ի ճարտարապետական արվեստանոցի կողմից: Նախագիծը մշակվել է ՀՀ գործող շինարարական նորմատիվային պահանջների, Կառուցապատողի և Եղվարդի համայնքապետարանի կողմից ներկայացված և նախագծային աշխատանքների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի համաձայն:

Համաձայն ՀՀ-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի 7-րդ ենթակետի, 1500 ք.մ և բարձր կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության ոլորտի կառույցներն ըստ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության, դասակարգվում են «Գ» կատեգորիա և պահանջում են նախատեսվող գործունեության բնապահպանական պետական փորձաքննության իրականացում՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից, «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

Նախագծվող բնակելի թաղամասի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 7467.0 ք.մ, ուստի սույն նախագիծը և նախատեսվող գործունեությունը պահանջում է շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) պատրաստում և ներկայացում բնապահպանական պետական փորձաքննության և փորձագիտական եզրակացության ձեռք բերում:

## 2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### 2.1 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և/կամ նվազեցմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները, նախատեսել գործունեության դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման միջոցառումները:



**2.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի կազմը**  
ՆԳՀ-ի կազմը սահմանված է «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետով և սույն ՆԳՀ-ը կազմված է՝ հաշվի առնելով այդ պահանջները:

**2.3 Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մեթոդաբանությունը**

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ՆԳՀ-ի մշակումն իրականացվել է ազգային օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին համապատասխան: Նախնական գնահատման հայտում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախագծվող Բնակելի թաղամասի էսքիզային նախագիծը և տեխնիկատնտեսական ցուցանիշները,
- նախատեսվող գործունեության տեղանք կատարած այցելությունների ընթացքում հավաքագրված տվյալները և տեղեկատվությունը,
- տարածաշրջանի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները, քարտեզները,
- ՀՀ բնապահպանության ոլորտը կարգավորող և սույն գործունեությանն առնչվող օրենսդրական կարգավորումները,
- շահագրգիռ կողմերի հետ քննարկումները:

**3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրական և կարգավորիչ շրջանակն ընդգրկում է ավելի քան 30 բնապահպանական օրենքներ: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերն ներկայացված են ստորև.

**ՀՀ Սահմանադրություն (2015).** 10-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ ընդերքը և ջրային ռեսուրսներ հանդիսանում են պետության բացառիկ սեփականությունը, իսկ հոդված 12՝ պետության իրթանիչ դերը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման և բնական պաշարների ողջամիտ օգտագործման գործընթացում՝ հաշվի առնելով կայուն զարգացման սկզբունքները և պատասխանատվությունն ապագա սերունդների առջև, ինչպես նաև յուրաքանչյուր ոքի պարտավորությունը շրջակա միջավայրի պահպանման գործընթացում:

**ՀՀ Օրենքը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014)** (Հոդված 14, կետ 6, ենթակետ 7, Հոդված 16, կետ 4) պահանջում է իրականացնել

նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատում, ՆԳՀ-ի կազմում, հանրային քննարկումների կազմակերպում, բնապահպանական փորձաքննության ձեռնարկում և փորձաքննական եզրակացության ստացում:

**ՀՀ Օրենքը Թափոնների մասին (2004)** կարգավորում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքագրումը, տեղափոխումը, պահեստավորումը, վերամշակումը և տեղադրումը ՀՀ-ում:

**ՀՀ Օրենքը Բնապահպանական Վերահսկողության մասին (2005)** կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ:

**ՀՀ Օրենքը Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին (2000)** կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:

**ՀՀ Օրենքը Քաղաքաշինության մասին (1998)**(Հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը: Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

**ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N11- Ն** «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում Շինարարական նորմերը հաստատելու մասին» (14 հունվար 2008) (Գլուխ IX):

**ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 44** Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ (28 ապրիլի 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության 30 հունվարի 2003 թվականի N 121-Ն որոշում, որի հավելվածի համաձայն սահմանվում է վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները:



ՀՀ Կառավարության արձանագրային որոշում N 30 «Շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմաններին հավանություն տալու մասին» (23 հուլիսի 2009), որը սահմանում է շինարարության և քանդման թափոնների անվտանգ գործածության պայմանները, երկրորդային ռեսուրս հանդիսացող թափոնների օգտագործման անվանացանկերը, շինարարության և քանդման թափոնների տեսակների ցանկերը:

**ՀՀ կառավարության 16.02.2006թ. թիվ 392-Ն որոշում** «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբեր համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին»,

**ՀՀ կառավարության 19.11.2014թ. թիվ 1325-Ն որոշում** «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին»,

**ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.12.2020թ. թիվ 102-Ն հրաման՝ ՀՀՇՆ II-6.02-2004 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն նախագծման նորմեր»,**

### **Ուղեցույցներ և ստանդարտներ**

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2018 թ), որը պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտներ, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի կողմից մշակված «Շինարարական աղբի կառավարման» ուղեցույցները:

## **4 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

«Մազնուլիա Կոմֆորտ» ՍՊԸ-ն մտադիր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Եղվարդ համայնքի Զովունի գյուղում Բազմաբնակարան շենքերի թաղամասի կառուցապատման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի համար ստանալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն: Ներկայացվող գործունեությունը նախատեսվում է ՀՀ, Կոտայքի մարզի, Եղվարդ համայնքի, Զովունի գյուղի 6-րդ փողոց 21 հասցեում գտնվող հողամասում, Զովունի գյուղի բնակելի կառուցապատման գոտում՝ բնակավայրերի նպատակային նշանակության հողատեսքում: Հողամասը գտնվում է Զովունի գյուղի

կենտրոնական մասում, բնակելի կառուցապատման գոտում՝ Եղվարդի խճուղուց 1110-150 մ հեռավորության վրա, 40-րդ փողոցի և Եղվարդի խճուղու միջանկյալ հատվածում: Հարևանությամբ գտնվում են տնամերձ հողամասեր, հասարակական և ընդհանուր օգտագործման տարածքներ և շինություններ: Տարածքը հյուսիս-արևելյան մասում սահմանակից է արտադրական տարածքի /շինանյութերի արտադրություն, պահեստներ/, իսկ մնացած մասերում բնակելի տարածքներ են /անհատական բնակելի, սեփական տներ/ հիմնականում Նկ.1.-ում ներկայացված է նախատեսվող գործունեության տեղադիրքը և իրավիճակային հատակագիծը:

Կառուցապատվող տարածքը հարթ, ռելիեֆային ազատ տարածք է: Բուն գործունեության տարածքում բացակայում են շենք-շինությունները, կառույցները, ինչպես նաև ծառաթփուտային բուսականությունը:

Նախագծման աշխատանքների համար հիմք են հանդիսացել Եղվարդ համայնքի ղեկավարի կողմից տրված 30.04.2021թ. տրամադրած N95 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանքը/ (Հավելված 1.), ՀՀ-ում գործող շինարարական նորմերը, Կառուցապատողի կողմից ներկայացված նախագծային առաջադրանքը, ինչպես նաև գործունեության տեղամասում իրականացված ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունները: Մասնագիտական քննարկումների արդյունքում իրականացվում են նաև լրացուցիչ ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ, որոնց արդյունքներից կախված հնարավոր է որոշ մասնաշենքերի դեպքում մանրամասը նախագծման փուլում նախագծել մինչև 15 վերգետնյա հարկ(այս պահին նախատեսված է մինչև 13 վերգետնյա հարկայնություն): Այդ արդյունքներից կախված, կառուցապատողը հարկ եղած դեպքում համապատասխանաբար կձեռնարկի նաև նոր ճարտարապետա-հատակագծային առաջադրանքի ձեռքբերման գործընթաց:

Կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 3.327 հա: Համաձայն էսքիզային նախագծի Բնակելի շենքերի թաղամասը նախագծվել է մինչև 3 ստորգետնյա հարկերով /որոնք ծառայում են որպես ստորգետնյա ավտոկայանատեղի/ և 9-13 վերգետնյա հարկերով: Հողամասում նախագծված է թվով 13 մասնաշենքեր: Կառուցապատման աշխատանքները իրականացվելու են 74671.0 ք.մ մակերեսում: Շինությունների վերգետնյա մասի մակերեսը կազմում է 72085 ք.մ, իսկ ստորգետնյա մասի մակերեսը կազմում է 20504 ք.մ: Հասարակական նշանակության տարածքի մակերեսը կկազմի 1935.0 ք.մ: Բազմաբնակարան շենքերի թաղամասի բնակարանների ընդհանուր թիվը կկազմի 810, որոնք կներառեն՝ 1-4 սենյականոց բնակարաններ: Թաղամասում նախատեսված է 393 հատ ավտոկայանատեղիով ստորգետնյա ավտոհանգրվան և 199 հատ բացօթյա ավտոկայանատեղի: Տարածքի բարեկարգումը /մայթեր և սավվածքներ/, կիրականացվի համաձայն նախագծի, իսկ կանաչապատման մակերեսը կկազմի 15120 ք.մ, որը կազմում է ընդհանուր տարածքի 45.4 %-ը:

Բնութագրվող հողամասում բացակայում են ինժեներական ցանցերը և այլ ենթակառուցվածքները, որոնք ենթակա են տեղափոխման: Տարածքում բացակայում են քանդման եթակա շինությունները և ծառաթփուտային բուսականությունը:

Ելնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանից, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է Նախնական գնահատման հայտի պատրաստում: Սույն նախնական գնահատման հայտի բովանդակությունը մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն նախնական գնահատման հառում: Գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

- Օդային ավազանի աղտոտում՝ շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,
- Շինարարության փուլում մերձակա բնակչությանը և օբյեկտներին պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,
- Շինարարական մեքենաների և տեխնիկայի աշխատանքով պայմանավորված տեղի երթևեկության խափանում,
- Հողերի դեգրադացիա և էրոզիա բուսածածկի վնասման արդյունքում, Հողերի և ջրային ռեսուրսների աղտոտում շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում առաջացող արտահոսքերով,
- Հողերի աղտոտում՝ շինարարության և շահագործման ընթացքում առաջացող թափոններով, շինարարական և կենցաղային աղբով,
- Աշխատողների առողջությանը հասցվող վնաս՝ գործունեության իրականացման շինարարության և շահագործման ընթացքում:

Հայտում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են վերը նշված ազդեցությունների և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչների վրա կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Նախնական գնահատման հայտի մշակման համար օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- Բազմաբնակարան շենքերի թաղամասի կառուցապատման նախագիծը,

- Նախատեսվող գործունեության համար հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- Տարածքի վերաբերյալ վերլուծությունները, սխեմաները,
- Շահագրգիռ կողմերի հետ բանակցություններն ու քննարկումները:  
Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.
- Բազմաբնակարան շենքերի թաղամասի կառուցապատման նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակում,
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,
- Բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և հանրային քննարկումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություն, մասնակիցների ցանկ տեսաձայնագրություն) ներկայացում շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:  
ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Եղվարդ համայնքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:



**Նկ.1** Նախագծվող «Բազմաբնակարան շենքերի թաղամասի» տեղադիրքը և իրավիճակային հատակագիծը, գ. Զովունի:



#### **4.1 Նախագծային և տեխնոլոգիական լուծումները**

Նախագծվող Բնակելի թաղամասի գլխավոր հատակագիծը և տեխնիկատնտեսական ցուցանիշները ներկայացված են Նկ.2-1-ում:

Բազմաբնակարան շենքերի թաղամասի կառուցապատման համար նախատեսվող տարածքը գտնվում է Եղվարդ Զովունի գյուղի 6-րդ փողոց հ. 21 հասցե հողամասում: Հողամասը գտնվում է Զովունի գյուղի կենտրոնական մասում, բնակելի կառուցապատման գոտում՝ Եղվարդի խճուղուց 1110-150 մ հեռավորության վրա, 40-րդ փողոցի և Եղվարդի խճուղու միջանկյալ հատվածում: Բազմաբնակարան շենքերի թաղամասը ներառում է թվով 13 մասնաշենքեր՝ մինչև 13 վերգետնյա և 3 ստորգետնյա հարկերով: Ինժեներա երկրաբանական լրացուցիչ ուսումնասիրությունների արդյունքներով հնարավոր է մանրամասը նախագծման փուլում որոշ մասնաշենքեր նախագծվեն մինչև 15 վերգետնյա

հարկայնությամբ: Վերգետնյա հարկերը բնակելի նպատակով են, իսկ ստորգետնյա հարկերը ծառայում են որպես ավտոկայանատեղի: Ստորգետնյա հարկերը նախագծվում են 393 հատ ավտոմեքենաների համար:

Կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 3.327 հա: Համաձայն էսքիզային նախագծի Բնակելի շենքերի թաղամասը նախագծվել է մինչև 3 ստորգետնյա հարկերով /որոնք ծառայում են որպես ստորգետնյա ավտոկայանատեղի/ և 9-13 վերգետնյա հարկերով: Հողամասում նախագծված է թվով 13 մասնաշենքեր: Կառուցապատման աշխատանքները իրականացվելու են 74671.0 ք.մ մակերեսում: Շինությունների վերգետնյա մասի մակերեսը կազմում է 72085 ք.մ, իսկ ստորգետնյա մասի մակերեսը կազմում է 20504 ք.մ: Հասարակական նշանակության տարածքի մակերեսը կկազմի 1935.0 ք.մ: Բազմաբնակարան շենքերի թաղամասի բնակարանների ընդհանուր թիվը կկազմի 810, որոնք կներառեն՝ 1-4 սենյականոց բնակարաններ: Թաղամասում նախատեսված է 393 հատ ավտոկայանատեղիով ստորգետնյա ավտոհանգրվան և 199 հատ բացօթյա ավտոկայանատեղի: Տարածքի բարեկարգումը /մայթեր և սալվածքներ/, կիրականացվի համաձայն նախագծի, իսկ կանաչապատման մակերեսը կկազմի 15120 ք.մ, որը կազմում է ընդհանուր տարածքի 45.4 %-ը:

Կոնստրուկտիվ լուծումների տեսանկյունից բնակելի մասնաշենքերը նախատեսվում են միաձույլ երկաթ/բետոնե (ե/բ) շրջանակային հիմնակմախքի իրականացմամբ, ներառյալ՝ շենքի հիմքերը, պուները, հեծանները և միջհարկային սալերը: Արտաքին և ներքին պատերը պեմզաբլոկ, արտաքին պատերը երեսպատվում են սրբատաշ տուֆե և տրավերտինե սալերով: Օդորակման համակարգերը տեղադրվում են աստիճանա-վանդակների հատածում հատուկ առանձնացված տարածքներում: Բնակարանների խոհանոցների, լոգարանների օդափոխությունը կատարվում է բնական եղանակով հատուկ նախատեսված հորանների միջոցով, որոնք բարձրանում են դեպի տանիք: Տանիքները հարթ են՝ կազմակերպված ներքին ջրահեռացումով: Աստիճանավանդակը չծխացող է, այն կապ չունի հասարակական տարածքների հետ: Կառուցապատվող տարածքին մոտեցումը կապահովվի առկա ճանապարհներով, որոնք անցնում են հողամասի տարբեր կողմերով: Արտաքին պատերում նույնպես օգտագործվելու են ե/բ կոնստրուկտիվ լուծումներ: Շենքերի տանիքը նախատեսվում է հարթ և կազմակերպված արտաքին ջրահեռացման լուծումներով: Բնակելի շենքի արտաքին պատերը նախատեսվում է իրականացնել մեկ շարք (200 մմ հաստ.) ամրանավորված պեմզաբլոկներով: Էներգոարդյունավետության և ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների նպատակով բոլոր պատերը արտաքինից կջերմամեկուսացվեն (40 մմ հաստ.) փրփրապոլիստիրոլային ջերմամեկուսիչ սալերով և կերեսպատվեն (40 մմ հաստ.) բազալտե և տրավերտինե սալերով: Բնակելի շենքերի բոլոր հարկերի միջանցքներում նախատեսվում են առանձնացված հորաններ՝ ինժեներական ցանցերի (ջրամատակարարում, ծխահեռացում, էլեկտրասնուցում) իրականացման համար:

Բնակելի հարկերի ընդհանուր օգտագործման միջանցքներից սարքավորված կլինեն ծխահեռացման համակարգով: Բնակարաններում նախատեսված են ինքնաշխատ ծխային հրդեհային ազդարարարման սարքեր: Միջանցքներից ծխահեռացումը նախատեսվում է իրականացնել մեկ ժամից ոչ պակաս հրակայունության սահման ունեցող նյութերից պատրաստված հատուկ հորաններով, ծխի հարկադիր արտածումով, ինչը կատարվում է բոլոր հարկերում տեղադրված ծխահեռացման կափույրների միջոցով:

Արտաքին հրդեհաշիջման համար նախատեսված է հակահրդեհային հիդրանտ, իսկ ներքին հրդեհաշիջման համար հարկերում նախատեսված է հակահրդեհային արկղեր, որոնցում կտեղադրվի հակահրդեհային փական ծորակով, ռետինյա խողովակ, հրշեջ փող և ձեռքի կրակմարիչներ:

Շենքերի բոլոր բացվածքները դեպի պատշգամբ ախատեսվում են իրականացնել հրակայուն ապակիներից և շրջանակներից: Շենքերում նախատեսվում է փոքր վերելակ, և բեռնատար վերելակ: Աստիճանավանդակների դռները կունենան ինքնափակման համակարգ, իսկ ավտոհանգրվանի հարկերը միմյանցից առանձնացված կլինեն ինքնաշխատ դարպասներով: Մեքենաների մուտքը ստորգետնյա ավտոկայանատեղի նախատեսված է երկկողմանի՝ բաց թեքահարթակներով, լուսացույցային կարգավորումով: Նախագծային լուծումներում հաշվի են առնված նաև սակավաշարժ խմբերի համար հարմարեցված թեքահարթակները՝ արտաքին մուտքերում:

Ավտոկայանատեղիի օդափոխության համակարգը կատարվել է ՀՀ գործող նորմերին համապատասխան, համաձայն որի նախատեսված է օդափոխման ներածման և արտածման համակարգ, որն իրականացվելու է երկու ջերմության ռեկուպերացիայով ներածման և արտածման ագրեգատներով: Ագրեգատները համալրված են ներածման և արտածման օդամուղներով, էլ. օդատաքացուցիչով, օդահովացուցիչով, ֆիլտրերով, ջերմափոխանակիչով, ավտոմատ կառավարման համակարգով, որը ծրագրավորվում է գործարանում:

Համալիրի տարածքում նախատեսվում են տեղադրել կենցաղային աղբի հավաքման համար նախատեսվող աղբամաններ, որոնց տեղադրման տեղերը կճշտվեն Զովունիի համայնքապետարանի հետ:

Նախագծով նախատեսված է արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ:

Շենքերի սեյսմազինվածության մակարդակը նախատեսված սեյսմիկ - III գոտու համար (9 Բայ և ավելի)

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերին հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Բազմաբնակարան շենքերի թաղամասի արտաքին ինժեներական ցանցերի համար կմշակվեն վերջնական նախագծերը /ջրամատակարարում, ջրահեռացում,



Էլեկտրամատակարարում, գազամատակարարում/: Ինժեներական ցանցերի միացումն իրականացվելու է նշված ծառայությունները մատուցող կազմակերպությունների կողմից տրամադրված տեխնիկական պայմաններին համաձայն /ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում/:

Բոլոր շինությունների շինարարական աշխատանքներն իրականացնվելու են միաժամանակ: Ըստ նշված բնութագրի ՄՆԻՊ 1.04.03-2008-ի նորմատիվներով հաշվարկված է 3 տարի 36 ամիս շինարարության տևողություն, այդ թվում 3 ամիս նախապատրաստական փուլ:


Համալիրի ջրամատակարարումն իրականացվելու է տարածքի հարևանությամբ անցնող քաղաքային ջրատարից, կոյուղին կմիացվի քաղաքային կոյուղատարին:

Նախագիծը մշակված է համաձայն ՀՀ տարածքում գործող հետևյալ նորմատիվային փաստաթղթերի՝

- ՀՀՇՆ 30-01-2014 քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում
- ՀՀՇՆ 31-01-2014 Բնակելի շենքեր. Մաս1 .Բազմաբնակարան Բնակելի Շենքեր
- ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի և Շինությունների Հրդեհային Անվտանգություն
- ՀՀՇՆ Iv-11.03.03-02 Ավտոկայանատեղեր

Կառուցապատման գլխավոր հատակագիծը և ընդհանուր տեխնիկատնտեսական ցուցանիշները բերված են ստորև՝ Նկ. 2-1-ում.

Նկ. 2-1 Նախագծվող Բնակելի թաղամասի գլխավոր հասակագիծը և տեխնիկատնտեսական ցուցանիշները



## 4.2 Բարեկարգում և կանաչապատում

Բազմաբնակարան շենքերի թաղամասի տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում շենքերի շուրջ կստեղծվեն նախագծով նախատեսված սալվածքներ և մայթեր, կիրականացվեն շրջակա տարածքների բարեկարգման աշխատանքներ: Այս աշխատանքների շրջանակում նախատեսվում է՝ երթևեկելի հատվածների, անցուղիների ասֆալտապատում, մայթերի ստեղծում, բազալտե եզրաքարերի իրականացում:

Տարածքում կստեղծվի նաև 15120 ք.մ մակերեսով կանաչ գոտի: «Կանաչ գոտիների բարեկարգման նախագիծ»-ը (Նկ.2-2) կհամաձայնեցվի Եղվարդի համայնքապետարանի հետ: Կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է արժեքավոր ծառատեսակների և բուսատեսակների տնկում, որոնց ընտրությունը կատարվել է հաշվի առնելով տեղանքի բնակլիմայական պայմանները: Նորաստեղծ կանաչ գոտիներում անհրաժեշտ սևահողը (356խմ ծավալով) կմատակարարվի լիցենզավորված մատակարարներից՝ պահպանելով ՀՀ-ում գործող օրենսդրական շրջանակը: Կանաչապատման նախագիծը, ընդհանուր նախագծային փաթեթի շրջանակներում կհաստատվի Եղվարդի համայնքապետարանի կողմից:

Կանաչապատման ողջ մակերեսով բուսահողի շերտը հիմնականում բացակայում է, քանի որ տեղանքը հիմնականում ծածկված է բերովի շինարարական մնացորդներով: Ուսումնասիրելով տեղանքը և խորհրդակցելով դենդրոլոգի հետ առաջարկվում է տեղադրել ստորև նշված բույսերի տեսականին համապատասխան նախնական քանակներով, անհրաժեշտությունից ելնելով բուսատեսակների տնկման համար կարող են տեղադրվել նաև ծաղկամաններ:

- Թղկի կարմիր - 11 հատ
- Մակուռա - 4 հատ
- Գնդաձև իլենի - 10 հատ
- Եղևնի կովկասյան - 2 հատ
- Բարբարիս - 10 հատ
- Եղևնի արծաթափայլ - 1 հատ
- Գնդաձև սամշիտ - 11 հատ
- Սյունաձև թույա - 8 հատ
- Բուկ եվրոպական - 3 հատ
- Ասպիրակ - 3 հատ
- Դրախտածառ - 3 հատ
- Կատալպա - 4 հատ
- Սամշիտ - 217 գմ
- Ծաղկանոց/թզուկ վարդեր/ - 35 մ<sup>2</sup>

Կանաչապատ գոտիների ոռոգումը կիրականացվի ոռոգման ներքին ցանցի միջոցով, որը նախագծվում է  $\Phi=20-40$ մմ տրամագծով պոլիէթիլենային խողովակներով,  $\Phi=15$  մմ ցողացիրներից,  $\Phi=20$ մմ ոռոգման վինտիլներից և  $\Phi=20-40$ մմ արկղով փականներից: Ոռոգման ջուրը կվերցրվի տարածքով անցնող ոռոգման ջրագծից: Ոռոգման ցանցի նախագիծը նույնպես ներառված է աշխատանքային նախագծում:

Նորատունկ բուսականության խնամքը հետագայում կիրականացվի Բազմաբնակարան շենքերի թաղամասի սպասարկման աշխատանքների շրջանակում, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումները, որի ընթացքում կպաշտպանվեն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:



Նկ. 2-2 Նախագծվող Բնակելի թաղամասի կանաչապատման/դենդրո նախագիծը:



### 4.3 Ջրամատակարարում և ջրահեռացում

Բազմաբնակարան շենքերի թաղամասի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են գործող շինարարական նորմերի ու կանոնների, ինչպես նաև «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի համաձայն:

Այսպիսով, բնակելի շենքերի ջրամատակարարումը, համաձայն տեխնիկական պայմանի, կկազմակերպվի տարածքի հարևանությամբ անցնող d=110 մմ քաղաքային ջրատարից: Ջրատարում վթարների և վերանորոգումների ժամանակ ջրամատակարարման անընդհատությունը ապահովվելու, ինչպես նաև ներքին հակահրդեհային ջրաքանակ ապահովելու համար նախատեսվելու է շենքերում պահուստային բաքի տեղադրում, որը միաժամանակ կարգավորող դեր է կատարում:

Կոյուղաջրերի և կենցաղային ջրերի արտաքին ջրահեռացումը, համաձայն տեխնիկական պայմանի, նախատեսվում է իրականացնել հարևանությամբ անցնող d=200 մմ կոլեկտորին միացմամբ:

Նախագծվող տարածքից մակերևութային ջրերի հեռացումը, համաձայն տեխնիկական պայմանի, նախատեսվում է իրականացնել հարևանությամբ անցնող d=400 մմ հեղեղատարին միացմամբ:

Բազմաբնակարան շենքերի թաղամասի կենտրոնացված տաք ջրամատակարարման գործընթաց չի նախատեսվում, վերջինս կկազմակերպվի բնակիչների կողմից լուկալ լուծումների իրականացմամբ:

### 4.4 Գազամատակարարում էլեկտրասնուցում

Բնակելի շենքերի գազամատակարարման գործընթացը կիրականացվի «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրամադրվող տեխնիկական պայմանի համաձայն: Համաձայն նախնական տեխնիկական քննարկումների բազմաֆունցիոնալ համալիրի ջեռուցումը և տաք ջրամատակարարումը բնակարաններում և տարածքներում իրականացվում է անհատական կաթսաների միջոցով: Գազամատակարարումը իրականացվում է քաղաքային ցանցից՝ տեղադրելով գազամատակարարման բաշխիչ-վահանակ:

Բոլոր մասնաշենքերի գազամատակարարման խողովակներն անցնում են ստորգետնյա հատվածով, շենքի մոտ բարձրանալով մտնում են սանդղավանդակին կից պատշգամբ, որտեղ ամեն հարկում տեղադրված են գազի հաշվիչները բնակարանների համար:

Բազմաբնակարան շենքերի թաղամասի էլ. մատակարարումը կատարվում է համաձայն տեխնիկական պայմանների և գործող նորմերի ու կանոնակարգի:

Էլեկտրասնուցման գործընթացը, համաձայն տեխնիկական պայմանի, կիրականացվի գործող ենթակայանի 0.4 կՎտ հզորության վահանից:

#### 4.5 Աձրևաջրերի հեռացում /հեղեղատար կոյուղի/

Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը նախատեսված է կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Տարածքի ցածրադիր տեղերում տեղադրվելու են անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը կհեռացվեն տարածքից և համաձայն տեխնիկական պայմանի կմիացվեն քաղաքային հեղեղատար ցանցին:

Նույն ցանցով և կհեռացվի շենքերի տանիքներից հավաքվող անձրևաջրերը և օդափոխության, օդորակման սարքավորումներից առաջացած կոնդենսատները: Ցանցը նախատեսվում է

#### 4.6 Շինարարական աշխատանքների կազմակերպում

Բազմաբնակարան շենքերի թաղամասի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական ցանցեր
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սավաճքներ և ասֆալտապատ հարթակներ:

Բազմաբնակարան շենքերի թաղամասի շինարարական աշխատանքների տևողությունը կկազմի 36 ամիս, որից 3 ամիս կիրականացվեն նախապատրաստական աշխատանքները: Ներկայացվող գործունեության նախաշինարարական փուլում շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է կազմակերպել շինհրապարակ՝ ցանկապատով և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներով:

**Նախաշինարարական աշխատանքների փուլում**, համաձայն շինաշխատանքների կազմակերպման նախագծի, կիրականացվեն շինարարական հրապարակի կազմակերպման գործողությունները: Հրապարակի կազմակերպումը կիրականացվի բացառապես



նախագծվող հողատարածքի վարչական սահմանների ներսում, որտեղ ըստ պլանի կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- հողատարածքի ժամանակավոր մետաղական ցանկապատում տարածքի համահարթեցման գործողություններ

- Կազմակերպել շինհրապարակ՝ ցանկապատով և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներով:

-լուսատուների տեղադրում և հրապարակի լուսավորության ( $\geq 20$  լք) ապահովում

-ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքերը՝ ապահովելով շինարարական ճամբարում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, գուգարան, աշղեկի աշխատասենյակ և այլն)

-շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրերը

- Տարածքում գոյություն ունեցող շինությունների ապամոնտաժման աշխատանքներ և ապամոնտաժման արդյունքում առաջացող թափոնների տեղափոխում հատկացված վայր:

- կատեղծվեն շինաշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիներ և այլ միջոցառումներ:

**Հիմնական աշխատանքների փուլում** իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- **Շինարարական/մոնտաժման աշխատանքների** իրականացում, որի ժամանակ կիրականացվեն Բազմաբնակարան շենքերի թաղամասի շինարարական աշխատանքները:

Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքերի շինարարություն ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի: Բոլոր տիպի շինարարական աշխատանքները անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները ըստ ՄՆԻՊ III-IV. 2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Մասնաշենքերի կառուցման ընթացքում ավտոկոունկի, բետոնապոմպի տեղակայումը և աշխատանքը առնվազն երկու կողմից ապահովելու նպատակով առաջարկվում է սահմանել հերթականությունը՝ առաջին հերթին մասնաշենք 1-ի կառուցում, ապա մյուս մասնաշենքերի կառուցում:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք կատարել պահպանելով շին. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինհրապարակում ոչինչ չի պատրաստվում, ամեն ինչ բերվում է պատրաստի վիճակում, մասնագիտացված կազմակերպություններից: Շինհրապարակում պահեստավորվում չի իրականացվելու: Առաջացող բոլոր տեսակի թափոնները և մնացորդային գրունտը առանց պահեստավորվելու տեղափոխվելու են համապատասխան աղբավայրեր, կամ հանձնվելու

են համապատասխան վերամշակող կազմակերպությունների, կրկնակի օգտագործման համար:

Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների ցանկը առաջարկվում է հասցնել նվազագույնի, հաշվի առնելով այն, որ շինհրապարակը գտնվում է Զովունի գյուղի տարածքում: Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների տեղակայման համար առաջարկվում է օգտագործել շինհրապարակի համեմատաբար ազատ տարածքները: Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կճշտվի շինարարության ընթացքում: Առաջարկվում է նախատեսել կոնտեյնների տիպի հատուկ շինություններ՝ աշխղեկի սենյակ, գործիքների պահեստ, մեխանիկական արհեստանոց, կիսափակ պահեստ, ինչպես նաև բիոզուգարան:

- ***Հողային աշխատանքներ***

Հողային աշխատանքների տևողությունը ըստ աշխատանքային նախագծի գնահատվել է 3 ամիս: Հողային աշխատանքների ընթացքում առաջացած 6300/սմ մնացորդային գրունտը կտեղափոխվի և կթափոնակույտվի Եղվարդի քաղաքապետարանի կողմից թույլատրված աղբավայրում: Շինարարության ընթացքում կօգտագործվեն շինարարական կազմակերպության շինարարական մեքենա-սարքավորումները, իսկ բացակայության դեպքում կիրականացվի անհրաժեշտ տեխնիկայի վարձակալություն: Տեղամասի հողային աշխատանքները կիրականացվեն հիմնականում մեքենայացված եղանակով (KOMATSU PC 400-7 կամ Hyundai 170W տիպի էքսկավատոր), իսկ դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից և շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը առաջարկվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- Առանձին ամրանային ձողերը, հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կկատարվի դրանց պահեստավորումը և տեղադրումը:

- Բետոնային խառնուրդը՝ միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար կառաքվի անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով՝ Զովունի գյուղին մոտ գտնվող բետոնաշաղախային հանգույցներից՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը հրապարակում:

- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ՝ շինարարական կազմակերպության բազա՝ հետագայում շինհրապարակ առաքման նպատակով:

Հրապարակում սորոն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստուկցիաները (ամրաններ և այլն) հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները՝ հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռոզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահպանումը հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան: Պահման վայրերը հաշվի են առնված հրապարակի կազակերպման պլանում:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել անմիջապես տարածքին կից անցնող քաղաքային ջրազծից:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը կիրականացվի մեքենայացման բազայում:

Շինարարական աշխատանքների ընթացքում վտանգավոր թափոնների առաջացումը և հնարավոր ազդեցությունները բացառելու նպատակով շինարարության ընթացքում քայուղերը, հեղուկ վառելիքը կպահվեն փակ տարաներով և անթափանց հիմքերի վրա (բետոնե, մետաղական կամ ավազե), ինչը կբացառի հողային շերտի հնարավոր աղտոտումը: Շինաշխատանքների ավարտից հետո նշված նյութերի մնացորդային քանակները որպես երկրորդային նյութ կօգտագործվեն շինարար կապալառուի կողմից այլ աշխատանքներում:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են Նախնական գնահատման հայտի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Բնակելի շենքերի շինմոնտաժային աշխատանքների հաջորդականությունը և ժամանակացույցը բերվում է *Հավելված 2*-ում: Կառուցապատման աշխատանքների տևողությունը՝ ըստ մշակված շինաշխատանքային կազմակերպման նախագծի (ՇԿՆ), հաշվարկվում է 3 տարի /36 ամիս/:

Բնակելի շենքերի կառուցապատման աշխատանքներում աշխատողների միջին թիվը՝ ըստ ՇԿՆ-ի, հաշվարկվել է 45 մարդ, որից ինժեներական կազմը՝ 5 մարդ, ծառայողական աշխատողներ (մեքենավար և օգնական)՝ 12 մարդ, արհեստագործներ և բանվորներ՝ 28 մարդ:

**4.7 Լյուքերի և բնառեսուրսների օգտագործում**

Բազմաբնակարան շենքերի թաղամասի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար: Ջրամատակարարումն իրականացվելու է տեխնիկական պայմանների համաձայն՝ գոյություն ունեցող ջրատարից, որը միացված է քաղաքային ջրամատակարարման ցանցին: Իսկ կոյուղին միացված է քաղաքային կոյուղատարին: Հակահրդեհային նպատակներով ջրի պահանջարկը 10լ/վրկ:

Էլեկտրաէներգիայի պահանջարկը շինարարության փուլում կապահովվի ժամանակավոր տրանսֆորմատորային ենթակայանից:

Աղյուսակ 2.-ում բերվում են աշխատանքների ընթացքում պահանջվող ռեսուրսների քանակը:

**Աղ. 2 Շինարարության ընթացքում պահանջվող ռեսուրսների քանակը:**

Անվանումը	Չափման միավորը	Քանակ
Էլեկտրաէներգիա	ԿՎտ	203.8
Ջուր (արտադրական)	խմ/օր	13.3
Խտացրած օդ (կոմպրեսոր)	հատ	1

Շինարարական մեքենասարքավորումների անվանացանկը ներկայացված է Աղ.3-ում ստորև.

**Աղ. 3 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը:**

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Էքսկավատոր	Hyundai 170W-7	2
2	Բուլլոզեր	KOMATSU D37-EX-22	1
3	Շարժական կոմպրեսոր	ЗИФ-55В	1
4	վերամբարձ ավտոկրունկ	Галичанин КС-65713-1	2
5	Աշտարակային կռունկ	TEREX CTT 91-TS12	1
6	Տոփանիչ	CR 3/60	4
7	Գույքային կաղապարամած	կոմպլ.	6
8	Թրթրիչ մակերեսային էլեկտրական	ИБ-91А	6
9	Թրթրիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	6
10	Փոխարկիչ թրթրիչների համար	ИБ-4	6
11	Էռակցման տրանսֆորմատոր	СТН-500	6

12	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	6
13	Ձեռքի էլեկտրական դուր	ИЭ-1208Э	6
14	Հղկող մեքենա	ИЭ-2201	6
15	Թրթրագլղոն	HAMI 3410	1
16	Ավտոբետոնախառնիչ	СВ-69Б	հաշվարկով
17	Ավտոբետոնատար	КрА3-65055	հաշվարկով
18	Ինքնաթափ ավտոմոբիլ	МА3-5550	հաշվարկով

## 5 ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

### 5.1 Տեղանքի ռելիեֆը և երկրաբանությունը

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ՀՀ Կոտայքի մարզ, Եղվարդ համայնքի Զովունի գյուղի տարածքում: Զովունի գյուղը գտնվում է Երևան քաղաքի հյուսիս-արևմտյան հատվածում (Դավթաշեն վարչական շրջանի սահմանին), մայրաքաղաքից 1 կմ, իսկ մարզկենտրոն Հրազդան քաղաքից, մոտ 55 կմ հեռավորության վրա: Զովունի գյուղը ահմանակից է նաև Եղվարդ, Քանաքեռավան, Քասախ և Սրգաշեն համայնքներին:

Զովունի գյուղը գտնվելով Եղվարդի սարահարթի սահմաններում և բնութագրվում է մեղմաթեք, հարթաբլրային ռելիեֆով, բացարձակ բարձրությունները տատանվում են 1100-1150մ սահմաններում:

Եղվարդի սարահարթը զբաղեցնում է Հրազդան-Քասախ գետերի միջագետքի կենտրոնական հատվածը: Արևմուտքում, դեպի Քասախ գետի հովիտը սարահարթը իջնում է կտրուկ լանջի տեսքով, իսկ արևելքում, դեպի Հրազդան դեպի հովիտը ձգվող հատվածում հստակ արտահայտված են երկու, առանձին հատվածներում՝ երեք էրոզիոն դարավանդներ: Լանջերի թեքությունը մինչև 3<sup>0</sup> է, բութագրվում են մերձհորիզոնական հարթավայրեր:

Եղվարդի սարահարթի ձևավորումը կապված է Արայի լեռան վերին պլիոցենյան հասակի էֆուզիվ գործունեության և Արագած լեռան հարավային լանջի չորրորդական լավային ծածկոցների հետ: Կառուցվածքային տեսակետից կազմված է միոցենյան գիպսաբեր և աղաբեր կավերի և քարաղի հզոր նստվածքային շերտերով:

### 5.2 Սեյսմիկ բնութագրերը

Համաձայն ՀՀՇՆ 20.04 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն» նախագծման նորմերի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի հետազոտվող տեղամասը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 0.3g արագացում և 8-9 բալ ուժգնությամբ երկրաշարժ:

### 5.3 Բնակլիմայական պայմաններ

Դիտարկվող շրջանը գտնվում է չոր մերձարևադարձային կլիմայական գոտում: Ուսումնասիրվող շրջանի կլիման արտահայտված ցամաքային է՝ շատ շոգ, չոր ամառ, չափավոր ցուրտ, անհողմ ձնառատ ձմեռ: Եղվարդի սարահարթի կլիման հիմնականում ձևավորվում է միջին լայնությունների օդային զանգվածների ազդեցության ներքո:

Տարածքը գտնվում է շինարարակլիմայական II ենթագոտում, ունի չափավոր, երկարատև տաք ամառով և ցուրտ ձմեռով կլիմա: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը հասնում է 390C: Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում է -330C: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 436 մմ: Գերակշռում են արևելյան ուղղության քամիները:

Չյան ծածկոցի հաստությունը կազմում է 68սմ, ճնշումը՝ 70 կգս/մ2: Հողի սառչելու խորությունը հասնում է 92սմ:

Ստորև բերված աղյուսակները բնութագրում են քաղաքի կլիմայական ռեժիմն ըստ «Եղվարդ» օդերևութաբանական կայանի (բացարձակ բարձրությունը 1336 մ) տվյալների: Տվյալները բերված են ըստ ՀՀՇՆ II-7-01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի:

#### Օդի ջերմաստիճան

Բնակավայրի բաց. բարձր.	Միջին ամսական, ըստ ամիսների												միջին տարեկան	բացարձակ նվազագույն	բացարձակ առավելագույն
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Եղվարդ 1336	-5.1	-3.2	2.4	9.3	14.3	18.6	22.7	22.7	18.5	11.7	4.8	-1.9	9.6	-33	39

#### Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրը	Օդի հարաբերական խոնավությունը (%) ըստ ամիսների												միջին տարեկան	միջին ամսական ժ. 13-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենացուրտ ամսվա	ամենատաք ամսվա
Եղվարդ	73	69	63	60	60	54	50	48	49	59	70	74	61	66	33

**Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը**

Բնակավայրը	Տեղումների քանակը միջին ամսական/օրական առավելագույնը, մմ												տարեկան	Տարնօրյա առավելագույնը	ձյան ծածկույթը	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			օրերի թիվը	Ջրի առավելագույն անկըձյանմեջ (մմ)
Եղվարդ	34	36	43	58	64	39	23	13	16	39	36	35	436	68	74	156
	30	28	42	40	42	29	53	45	35	39	37	28	53			

**Քամի**

Բնակավայրը	Մթնոլորտային ճնշումը ԳՊԱ	Տարվա ամիսը	Քամու ուղղությունների կրկնելիությունը %									Քամու արագությունը մ/վրկ	Քամու արագության միջին արագությունը մ/վրկ	Քամու արագության միջին արագության քանակը (>15 մ/վրկ) օրերի քանակը	Քամու հաշվարկային արագությունը (մ/վրկ), որը հնարավոր է մեկ անգամ տարիների ընթացքում					
			ըստ ուղղությունների												Անհող մութային կրկնելիությունը %	Քամու արագության միջին արագությունը մ/վրկ	Քամու արագության միջին արագության քանակը	20	50	100
			հս. հյուսիսային	հս. արևելյան	արևելյան	հվ. արևելյան	հվ. հյուսիսային	արևմտյան	արևմտային	հս. արևմտյան	հս. արևելյան									
Եղվարդ	866,0	I	6/1.7	48/1.8	11/1.7	3/1.5	15/1.7	6/1.9	9/1.8	2/1.7	40	1.1	2,6	29	24	29	34			
		IV	5/3.0	48/3.8	7/2.7	3/2.4	17/2.4	10/2.8	8/2.7	2/2.1	23	26								
		VII	6/4.9	73/5.5	4/4.9	1/1.7	7.3.0	4/2.5	4/3.0	1/1.8	11	4.8								
		X	5/2.7	55/3.1	6/2.1	3/1.9	16/1.9	8/2.3	6/1.8	1/2.2	31	1.9								





Ուսումնասիրվող տարածքի տեղադիրքը

#### 5.4 Բնության հատուկ պահպանվող տարածքներ և պատմամշակութային հուշարձաններ

Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ, ինչպես նաև բնութագրվող տարածքում և տարածքի մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ, քանի որ գործունեության ենթակա տարածքը գտնվում է բնակելի, կառուցապատված միջավայրում:

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N 1059-Ս որոշման ՀՀ Կոտայքի մարզում գրանցված են բնության հատուկ պահպանվող հետևյալ տարածքները.

- Էրեբունու արգելոց,
- «Բանքսի սոճու» արգելավայր,

- «Արգական-Մեղրաձորի» արգելավայր,
- «Հանքավանի ջրաբանական» արգելավայր:

Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի՝ բնության հատուկ պահպանվող տարածքների կատեգորիայից է բնության հուշարձանը: ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N967-Ն որոշմամբ: Համաձայն որոշման ՀՀ Կոտայքի մարզում հաշվառված են հետևյալ երեք հուշարձանները՝ «Անանուն» խզվածքներ, Թագավորանիստ խարամային կոնի պեմբաների և 32 խարամների կոնտակտ և «Թագավորանիստ» խարամային կոն: Նշված հուշարձանները Եղվարդ քաղաքից գտնվում են 4կմ հեռավորության վրա, իսկ Զովունի գյուղից 10 կմ հեռավորության վրա:

Զովունի գյուղի վարչական տարածքում է գտնվում Կարմիր բերդ կոչվող պատմամշակութային հուշարձանը, այն թվագրվում է միջին բրոնզից մինչև վաղ միջնադար, իսկ հայտնաբերված խեցեղենի նմուշները՝ 2-րդ-1-ին հազարամյակներ, տարածքում պահպանվել են 7-րդ դ. բերդի ավերակները, նրան հարող տարածքով (Հրազդանի կիրճում) հոսում է Հրազդան գետը: Գյուղի արևելյան եզրին կա մ.թ.ա. 2-րդ-1-ին հազարամյակներին թվագրվող կիկլոպյան ամրոց, իսկ ընդհանուր առմամբ գյուղում կա ՀՀ Կառավարության կողմից հաստատված 24 հուշարձան: Նշված հուշարձանները չեն առնչվում կառուցապատման համար նախատեսվող տարածքի հետ:

## 5.5 Օդային ավազան

ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ, Հրազդան և Գյումրի քաղաքների) մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են Աղյուսակ 3-ում, որոնց հաշվարկները կատարվել են ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի: Օդային ավազանի աղտոտվածության մոնտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Եղվարդ քաղաքում և Զովունի գյուղում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

Համաձայն ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) վիճակագրական տեղեկագրի՝ 2021թվականի դրությամբ Զովունի համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 8350 մարդ: Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից (Աղ . 3), Զովունի գյուղում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. Փոշու մասնիկներ՝ 0,2մգ/մ<sup>3</sup>, ածխածնի մոնօքսիդ՝ 0,4 մգ/մ<sup>3</sup>, ազոտի երկօքսիդ՝ 0,008 մգ/մ<sup>3</sup> և ծծմբի երկօքսիդ՝ 0,02 մգ/մ<sup>3</sup>:

Նշված մակարդակները գտնվում են ՀՀ գործող նորմերի (ՀՀ որոշում 160-Ն, 2006 թ.) սահմանում

**Աղ. 4** Մթնոլորտն աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝ հաշվարկված ըստ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակի

Բնակչության քանակը (հազ.)	Նյութերի ֆոնային կոնցենտրացիաները, (մգ/մ <sup>3</sup> )			
	Ընդհանուր փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

### 5.6 Հողային ռեսուրսները և հողօգտագործումը

Դիտարկվող տարածաշրջանը ներկայացված է շագանակագույն հողերով, որոնց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5 %-ը՝ ուժեղ քարքարոտ:

Շագանակագույն հողերը ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա: Հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է 30-40սմ-ի սահմաններում, ռելիեֆի իջվածքային մասերում հաճախ այն հասնում է 50-60սմ-ի: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին:

Բնութագրվող տարածքում, կառուցապատված լինելու պատճառով, բուսահողն առկա է միայն այն հատվածներում, որտեղ տարածված է խոտային ծածկույթ:

ՀՀ Կառավարության 1404-Ն որոշման համաձայն, հողային աշխատանքների ժամանակ նախատեսվում է հանել հողային շերտը /որը ամբողջ հողամասում գնահատվել է մոտ 100 խմ ծավալով/ կուտակել և հետագայում օգտագործել կանաչ տարածքի բարեկարգման և նոր սիզամարգերի ստեղծման աշխատանքների համար: Մինչ օգտագործումը հողաբուսաշերտը կույտերով նախատեսվում է պահպանել շին. հրապարակում՝ դրա համար նախատեսված առանձին տեղամասում: Հողաբուսաշերտի պահպանման համար սովորաբար օգտագործվում են մոտ 2 մ բարձրությամբ կույտեր՝ 25° առավելագույն թեքությամբ: Հողաբուսաշերտը կպահպանվի այնպիսի տարածքում, որտեղ կբացառվեն՝ բուսական բուսական ծածկույթը, շինարարությունից առաջացող ցանկացած թափոնները և հնարավոր էրոզիոն երևույթները:

Կանաչապատման համար լրացուցիչ բուսահողը (շուրջ 356խմ ծավալով) նախատեսվում է կառուցապատվող տարածք բերել ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն Եղվարդի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

Կառուցապատվող տարածքը ըստ սեփականության վկայականի (N 2042021-07-0017, կադաստրային ծածկագիր՝ 07-029-0020-0009, 07-029-0020-0009) հանդիսանում է կառուցապատող «Մազնուլիա Կոմֆորտ» ՍՊԸ-ին 2021 թվականի ապրիլի 21-ին սեփականության իրավունքով տրամադրված գույք: Անշարժ գույքի նկատմամբ իավունքների պետական գրանցման վկայականը ներկայացված է Հավելված 3.-ում: Հողամասը՝ ըստ նպատակային նշանակության, հանդիսանում է բնակավայրերի, իսկ ըստ գործառնական նշանակության՝ այլ հողեր, ընդհանուր օգտագործման: Համաձայն սեփականաշնորհման վկայականի՝ հողամասի մակերեսը կազմում է 1.207106, 2.12035 հա: Տարածքում բացակայում են ինժեներական ենթակառուցվածքները քանդման ենթակա շինությունները:

## 5.7 Զրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Դիտարկվող տարածքում հիմնական ջրային ռեսուր է հանդիսանում Հրազդան գետը, որը հոսում է Հրազդանի կիրճով՝ Զովունի գյուղին հարող տարածքով: Հրազդան գետի Արզնի ՀԷԿ-ից ներքև հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և հանքայնացումով: Քանի որ ներկայացվող տարածքի հեռավորությունը Հրազդան գետի մոտակա հատվածից կազմում է մոտ 2 կմ ուղիղ գծով, շինարարական աշխատանքները չեն կարող ազդել Հրազդան գետի ջրի որակի վրա:

Տարածաշրջանով անցնում է Արզնի-Շամիրամի ջրանցքը, որը բաց տեսակի ջրատար է, սկիզբ է առնում Հրազդան գետից մոտ 1400 մ.ծ.մ. մակարդակից և ավարտվում 1000 մ.ծ.մ. բարձրության վրա:

Կառուցապատվող տարածքում գրունտային և ստորերկրյա ջրային հոսքեր ըստ ֆոնդային տվյալների չեն արձանագրվել: Դա պայմանավորված է այն փաստով, որ տեղանքի հատակը ծածկված է այլուվիալ ավազախճային խառնուրդով և ավազակավով: Այլուվիալ բերվածքները հիմնատակվում են հրաբխային ձևավորումներով (տուֆ, խարամ և շլակը), որոնք էլ օժտված են բարձր ջրաթափանցելիությամբ:

Հիդրոերկրաբանական տեսակետից, համաձայն գոյություն ունեցող գրական տվյալների և կատարված հետազոտությունների, բնութագրվող տեղամասը աղքատ է գրունտային ջրերով: Գրունտային ջրերը գտնվում են 30 մ-ից խորը հորիզոններում:



### 5.8 Տարածաշրջանի կենսաբազմազանությունը

Բնութագրվող հողակտորը գտնվում է ամբողջապես կառուցապատված տարածքում, Զովունի գյուղի կենտրոնում, ուստի հայտի շրջանակներում չի դիտարկվում տեղանքում և հարակից տարածքներում բուսական կամ կենդանական տեսակների, էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակների, ինչպես նաև կենդանիների միզրացիոն ուղիների վերաբերյալ:

Բնութագրվող տարածքն աչքի չի ընկնում բուսականությամբ: Հողամասը որոշ հատվածներում ներկայացված է ինքնաբերաբար աճած խոտածածկով: Կառուցապատվող տարածքում բացակայում է ծառաթփուտային բուսականությունը: Առաջարկվել է շինություններին մոտ գտնվող վնասված, կիսաչոր վիճակում գտնվող բարդի ծառատեսակները փոխարինել էկոլոգիական տեսանկյունից ավելի արժեքավոր ծառատեսակներով, որը կիրականացվի տարածքի կանաչապատման աշխատանքների շրջանակներում: Կառուցապատումից հետո տարածքում կստեղծվի կանաչ գոտի, որի համար կբերվի բուսահող, կամ կօգտագործվի շինարարության ընթացքում պահեստավորված բուսահողը:

Եղվարդի սարահարթի տարածքը ներկայացված է հիմնականում տափաստանային բուսականությամբ: Հացազգի և հացազգի-բազմաբուսականությամբ տափաստանները հիմնականում փեստուկային լեռնային տափաստաններ են (*Festuca valesiaca* ձևավորումներ) բարակոտիկ կատարավորի (*Koeleria cristata*), կրակ խայտաբղետի (*Bromus variegata*), դաշտավլուկ սոխուկավորի (*Poa bulbosa*), ճիլ տափաստանայինի (*Phleum phleoides*) մասնակցությամբ: Առանձին հատվածներում նկատվում են ոչ մեծ հարոսներ, որոնցում ամբողջությամբ գերիշխում է երիզախոտը/երիզաքիստ երկարամազը: Նարդեսների խմբավորումները աչքի են ընկնում իրենց բնորոշ դեղնականաչավուն գույնով. ամառվա սկզբին դրանց ցողունը սկսում է դեղնել, իսկ հուլիսին այդ բույսերի վերգետնյա հատվածը չորանում է:

Կառուցապատվող տարածքը գթեթե զուրկ է բուսական ծածկույթից, ինչը պայմանավորված է հողի բերրի շերտի բացակայությամբ և տարածքը կազմող ապարների քիմիական կազմաբանությամբ, ֆիզիկամեխանիկական հատկություններով:

Նախնական դիտարկման ժամանակ թփուտային բուսականության մեջ նշվել է սովորական կաշաղակի բույն, այդ հատվածի վրա դիտվել է կաճաղակների թռիչք: Նշվել են բազմաթիվ դաշտամկներ, կարիճ (շագանակագույն), ծղրիղներ, մորեխներ, մրջյուններ: Եղվարդի բնակիչները նշում են, որ այդ հատվածում հաճախակի նկատում են աղվես:

Նախնական գնահատման հայտի կազմման ժամանակ ուսումնասիրվել է ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված տեղեկատվությունը բուսական կամ

կենդանական տեսակների աճելա- և ապրելավայրեր (հիմք՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքը. <http://www.mnp.am>): Եղվարդ բնակավայրի շրջանում արձանագրված են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված միայն մի տեսակ՝ Սոխ Օլթիի: Այն համարվում է վտանգված տեսակ, բուսատեսանին սպառնացող վտանգը կապված է տափաստանների հերկման և գերարածեցման հետ: Աճելավայրերից մեկը Երևանի ֆլորիստիկ շրջանում՝ Նոր Գեղի և Եղվարդ բնակավայրերի միջև: Բույսը աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ.մ. 1500-2300մ բարձրությունների վրա, քարքարոտ լեռնայն տափաստաններում: Կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներից Եղվարդ բնակավայրի շրջանում հայտնի են.

- Քալաշյանի երկարաբեղիկը – ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, որը տարածված է Արայի լեռան հարավային լանջերին՝ Եղվարդից դեպի հյուսիս-արևելք: Տեսակի պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

- Հայկական սևամարմինը – սահմանափակ արեալով տեսակ, Հայաստանի էնդեմիկ: Տարածված է Եղվարդ ավանի շրջանի լեռնատափաստաններում, պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

Կառուցապատվող տարածքում նշված բուսական և կենդանական տեսակները չեն կարող դիտարկվել, քանի որ տարածքը գտնվում է կառուցապատված, բնակելի միջավայրում:

## 6 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ

### ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ շինարարության փուլ

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները և ռիսկերը գնահատվում են նախագծվող Բազմաբնակարան շենքերի թաղամասի շինարարական աշխատանքների ընթացքում, մասնավորապես, գնահատվում են անօրգանական փոշու և այլ ծխագազերի արտանետումներ, աղմուկի մակարդակի աճ շին-գործողությունների ընթացքում, սակայն նշված ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված՝ հիմնականում ընդգրկելով նախատեսվող գործունեության տեղամասը:

Ըստ ազդեցության աստիճանի և ինտենսիվության՝ շրջակա միջավայրի վրա բոլոր բացասական ազդեցությունները և ռիսկերը գնահատվում են մինիմալ և կառավարելի գործունեության ընթացքում՝ հաշվի առնելով նախատեսվող շինարարական աշխատանքների ծավալը և բնույթը, ինչպես նաև հեռավորությունը զգայուն ազդակակիրներից:

### 6.1.1 Օղային ավազանի աղտոտվածություն և մեղմացման միջոցառումները

Բազմաբնակարան շենքերի թաղամասի կառուցապատման աշխատանքների ընթացքում հիմնականում կանխատեսվում են անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ հողային աշխատանքների ընթացքում: Հորատման, բեռնման, թափոնակույտման աշխատանքների ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ՝

$$Q = K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_6 \times B \times G \times 10^6 / 3600, \text{ գ/վ}$$

որտեղ՝

$K_1$  –ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

$K_2$  –ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէռոզոլային մասնիկների, 0.02

$K_3$  –ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 2.5

$K_4$  –ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

$K_5$  –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

$K_6$  –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

$B$  –ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

$G$  –ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների ընդհանուր տևողությունը հաշվարկվում է մոտ 3 ամիս կամ  $3 \text{ ամիս} \times 22 \text{ օր} \times 8 \text{ ժամ} = 528 \text{ ժամ/շինարարություն:}$

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը գնահատվում է 9300 խ.մ կամ 14880 տոննա:  $14880 \text{ տոննա} / 528 \text{ ժամ} = 28.18 \text{ տ/ժ}$

Այսպիսով՝

$$Q = (0.05 \times 0.02 \times 2.5 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 28.18 \times 10^6) / 3600 = 0.469 \text{ գ/վ կամ}$$

$$0.469 \text{ գ/վ} \times 528 \text{ ժ} / 2 \times 3600 \text{ վ} / 10^6 = 0.89 \text{ տ}$$

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված և չեն դիսպերսվի տարածքի սահմաններից դուրս՝ հաշվի առնելով մասնիկների մեծ չափերը և դրանց արագ գրավիմետրիկ նստելու հատկությունը: Հետևաբար, փոշու արտանետումները չեն գերազանցի ՀՀ թույլատրված նորմերը, իսկ մթնոլորտային ավազանում դրանց հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կկանխարգելվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական միջոցառումների ծրագրում ներկայացված միջոցառումների իրականացմամբ, մասնավորապես.

- շինարար կապալառուն պարբերաբար կիրականացնի շինարարական հրապարակի ջրցանման և փոշենստեցման գործողություններ, ինչպես քանդման այնպես էլ շինարարական աշխատանքների ընթացքում,



- շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ, սահմանափակ 30կմ/ժ-ը չգերազանցող արագությամբ,
- փոշի առաջացնող սորուն նյութերը (ավազ, խիճ և այլն) շինարարական հրապարակում կպահվեն պաստառներով ծածկված վիճակում
- կիրականացվեն անվադողերը մաքրելու (ավազակոպձային մակերևույթների իրականացում) և լվացման միջոցառումներ,
- կառուցվող շենքերը արտաքինից և ներքինից կծածկվեն համապատասխան բարձրության անթափանց պաստառներով,
- աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակը:

Օդային ավազանի պաշտպանությանն ուղղված միջոցառումների ցանկը ներկայացվում է *Աղյուսակ 6.-ում (տես 2. ենթաբաժին, Օդի աղտոտում և փոշու կառավարում):*

### **6.1.2 Աղմուկի և թրթռումների ազդեցություն և մեղմացում**

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում և կանոնավոր կերպով կհսկվի վերջիններիս տեխնիկական վիճակը, իսկ անսարքությունների հայտնաբերման դեպքում կիրականացվեն համապատասխան միջոցառումներ:

Սոցիալական ազդեցությունների մեղմացման տեսանկյունից հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն կեսօրվա ժամերին, այն է՝ ժամը 14:00-ից 18:00:

Շինարարական գործողությունների ընթացքում հնարավոր թրթռումների մակարդակներից ազդեցություններ հարևան ազդակակիրների վրա չեն գնահատվում՝ հաշվի առնելով վերջիններիս հեռավորությունը նախագծվող տարածքից ( $\geq 20$  մ): Բացի այդ շինարարական աշխատանքների ընթացքում շինարար կապալառուն պարտավոր է հետևել ՀՀ-ում թրթռումների գործող նորմերին, քանի որ բնակելի շենքերի կառուցման ընթացքում հարակից կառույցների վրա հասցրված ցանկացած ֆիզիկական վնասը կվերացվի շինարար կապալառուի կողմից՝ սեփական միջոցների հաշվին:

Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումների առավել մանրամասն ցանկը ներկայացված է *Աղյուսակ 7.-ում (2 ենթաբաժին, Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարում):*

### 6.1.3 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման, որոշ շինաշխատանքների կազմակերպման համար, ինչպես նաև աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Բազմաբնակարան շենքերի թաղամասի կառուցման աշխատանքների ընթացքում առաջացած փոշու մակարդակները և դրանց հնարավոր տարածման ռիսկերը կկառավարվեն իրականացնելով շինարարական մակերեսների կանոնոնավար ջրցանում:

*Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսի հաշվարկը բերվում է ստորև.*

$$V = S \times K \times T \times K_1$$

որտեղ՝

S – ջրցանվող տարածքի մակերեսն է՝ 2000 ք.մ

K – 1 մ<sup>2</sup> օրական ջրցանի նորմատիվն է՝ 0.0015 խ.մ,

T – ջրցանի օրերը (տաք և չորային եղանակին)՝

22 օր x (30 ամիս - (5 (նոյեմբերից-ապրիլ) x 2) ամիս = 22 օր x 20 ամիս = 440 օր

K<sub>1</sub> - ջրցանի օրական քանակը՝ 1

Այսպիսով՝  $V = 2000 \times 0.0015 \times 440 = 1320$  խ.մ /շինարարություն ժամանակ

Շին աշխատանքների ամբողջ ընթացքում ջրցանի նպատակով ծախսվող ջրի քանակը կկազմի 1320 խ.մ:

Ջրցանի հաշվարկները կատարված են ըստ նորմերի և հաշվարկված ծավալները չեն ենթադրում հոսքաջրերի առաջացում: Ջրցանի միջոցառումները հրապարակում կկատարվեն պատշաճ մակարդակով՝ կանոնավոր և հաշվարկված ջրցանի ցուցանիշների շրջանակում՝ բացառելով հոսքաջրերի առաջացումը:

*Կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար անհրաժեշտ ջրի ծախսի հաշվարկը ներկայացվում է ստորև.*

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

որտեղ՝

n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է՝ 17 մարդ

N - ջրածախսի նորման՝ 0.016 խ.մ,

n<sub>1</sub> - բանվորների թիվն է՝ միջին 28 մարդ

N<sub>1</sub> - ջրածախսի նորման բանվորների համար՝ - 0.025 խ.մ /մարդ օր

T – աշխատանքային օրերի առավելագույն թիվը ամբողջ շինարարության ընթացքում՝ 22 օր x 36 ամիս = 792 օր :

Այսպիսով՝  $W = (17 \times 0.016 + 28 \times 0.025) \times 792 = 769.8$  խ.մ/ շինարարություն ժամանակ կամ 0.972 մ<sup>3</sup>/օրական:

Շինարարական աշխատանքներում և բանվորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը կվերցրվի նախագծվող հողամասին կից անցնող քաղաքային ջրագծից:

Ներկայացվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցություններ չըրային համակարգերի վրա չեն կանխատեսվում, քանի որ նախագծվող հողամասի մերձակայքում չկան ազդեցության ենթակա ջրային մարմիններ:

Այլ անուղղակի ազդեցություններ չըրային համակարգերի վրա ևս չեն կանխատեսվում, քանի որ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ՝ բացառելով շին-մեքենաների երթևեկության ընթացքում հնարավոր արտանետումները:

Շինարարական աշխատանքների ընթացքում հոսքաջրերի առաջացում ևս չի կանխատեսվում՝ հաշվի առնելով աշխատանքների բնույթը, բացի այդ աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր հոսքաջրերի արտահոսքերը և այլ արտանետումները շինարարական հրապարակից: Շին գործողությունների ընթացքում գնահատվում են կեղտաջրերի (բետոնաջուր՝ բետոնախառնիչների լվացումից) առաջացում, որոնց հեռացման համար հրապարակում կպահվի կեղտաջրերի հեռացման տարա ( $\geq 10$  խ.մ), որտեղ կհեռացվեն կեղտաջրերը, ինչպես նաև տեղումների ընթացքում հնարավոր հոսքաջրերի առաջացման դեպքում վերջիններս ևս կհեռացվեն տարայում կամ կուղղորդվեն տեղամասին կից քաղաքային հեղեղատար: Տարայում հետերոզեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս հնարավոր կլինի շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը՝ օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական աշխատանքներում:

Շին. հրապարակը նախատեսվում է ապահովել բիոզուգարաններով, որոնց տեղադրումը, շահագործումն ու ապամոնտաժը կիրականացվի արտադրող կազմակերպության սերտիֆիկատների և նորմատիվների հիման վրա՝ բիոզուգարանների քանակը նախատեսել էլնելով օրական աշխատող բանվորների առավելագույն թվաքանակից:

Շին. հրապարակում նախատեսված գրասենյակային տարածքն ապահովված է լինելու լվացարանով, աթոռներով, սեղանով, պահարանով, որից կարող են օգտվել նաև բանվորները: Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կճշտվի շինարարության ընթացքում և ըստ անհրաժեշտության այլ լրացուցիչ պայմանների ապահովումը կարող է իրականացվել հետագայում:

#### 6.1.4 Թափոնների առաջացում և կառավարում

Կառուցապատվող տարածքում ինարարական աշխատանքների ընթացքում կգոյնաշուրջ 7800 խ.մ ավելորդ գրունտ և 120 խ.մ շինադր, որը ժամանակավոր կուտակվելու է շինհրապարակում կազմակերպված կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև կանոնավոր կերպով (ամենաուշն երեք օրը մեկ) տեղափոխվելու և թափոնակույտվելու է Եղվարդի քաղաքապետարանի կողմից թույլատրված աղբավայր։

Շինարարական աշխատանքների ընթացքում գնահատվում են աղ.5-ում ներկայացվող տեսակային կազմով վտանգավոր թափոնների առավելագույն քանակների առաջացում (բն. նախարարի N430Ն հրամանի հավելված, 25 դեկտեմբեր, 2006թ)։

Գործունեության ընթացքում կենցաղային աղբի մնացորդները հավաքելու նպատակով կտեղադրվեն աղբամաններ, որտեղից աղբը կանոնավոր կերպով (ամենաուշն երկու օրը մեկ) վարչական շրջանի կամ աղբահանող ընկերության հետ կնքվող պայմանագրային հիմունքներով կհեռացվի հանրային աղբաման։

Շինարարության ողջ ընթացքում առաջացող յուղերի բանեցված մնացորդային քանակները կհավաքվեն և կպահվեն հերմետիկ փակ և մետաղական տարաներում, իսկ հետագայում կհանձնվեն վերջիններիս վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպության։

Հրապարակում քայուղերի և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մետաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի վրա հնարավոր աղտոտման ռիսկերը։

Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քայուղման գործողությունները կիրականացվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի բացառվի հրապարակում նյութերի արտահոսքերով պայմանավորված հնարավոր ռիսկերը։

Թափոնների կառավարման միջոցառումների համալիր ցանկը բերված է Աղյուսակ 7.-ում (5. ենթաբաժին, Թափոնների կառավարման պլան), իսկ ստորև բերված է առաջացող թափոնների տեսակները և քանակը։

Աղյուսակ 3.3. Թափոնների տեսակները և քանակները

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը, տ/տարի
1	շինարարական աղբ	IV	91200600010 04	120մ <sup>3</sup> շինարարության ընթացքում

2	Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	II	9211010013012	0.08
3	Իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ	III	5410030302033	0.3
4	Բանեցված շարժիչների յուղերի թափոններ	III	5410020102033	0.4
5	Բանեցված դողածածկաններ	IV	5750020213004	0.3
6	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	1.0

Գործունեության ընթացքում գոյացած կենցաղային աղբը կհավաքվի հրապարակում տեղադրվող կենցաղային աղբի համար նախատեսվող տարաներում և կանոնավոր կերպով կհեռացվի հասարակական աղբամաններ: Շինարարության ողջ ընթացքում առաջացող յուղերի բանեցված թափոնները կհավաքվեն և կպահվեն հերմետիկ փակ և մետաղական տարաներում, իսկ հետագայում կհանձնվեն վերջիններիս վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպության, կամ կրկնակի կօգտագործվեն:

***Հողային ռեսուրսի վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումներ***

Բնութագրվող տարածքում, կառուցապատված լինելու պատճառով բուսահողը միայն այն տարածքներում է առկա, որտեղ տարածված է խոտային ծածկույթ: ՀՀ Կառավարության 1404-Ն որոշման համաձայն, հողային աշխատանքների ժամանակ նախատեսվում է հանել հողային շերտը /մոտ 100 խմ ծավալով/ կուտակել և հետագայում օգտագործել կանաչ տարածքի բարեկարգման և նոր սիզամարգերի ստեղծման աշխատանքների համար: Մինչ օգտագործումը հողաբուսաշերտը կույտերով նախատեսվում է պահպանել շին. հրապարակում՝ դրա համար նախատեսված առանձին տեղամասում: Հողաբուսաշերտի պահպանման համար սովորաբար օգտագործվում են մոտ 2 մ բարձրությամբ կույտեր՝ 25° առավելագույն թեքությամբ: Հողաբուսաշերտը կպահպանվի այնպիսի տարածքում, որտեղ կբացառվեն՝ բուսական բուսական ծածկույթը շինարարությունից առաջացող ցանկացած թափոնները, հնարավոր էրոզիոն երևույթները:

Հողային աշխատանքների ընթացքում առաջացած գրունտը, որը գնահատվում է հետագա օգտագործման համար ոչ պիտանի կտեղափոխվի և կթափոնակույտվի աղբավայրում:

Հրապարակում քսայուղերը և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մետաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային շերտերի հնարավոր աղտոտման ռիսկերը:

Նախատեսվող գործունեության ընթացքում մեքենա-սարքավորումների լիզքավորումը, քսայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողությունները հիմնականում կիրականացվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի հնարավորինս բացառվի շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և հնարավոր ռիսկերը: Նշված ռիսկերի կառավարման միջոցառումները մանրամասն ներկայացված են Աղյուսակ 7.-ում (5 և 6 ենթաբաժին, Թափոնների կառավարում և արտակարգ իրավիճակների կառավարում):

### **6.1.5 Ազդեցություն բուսական աշխարհի վրա և մեղմացման միջոցառումները**

Նախագծվող հողամասում չկա ազդեցության ենթակա ծառաթփային բուսականություն: Հողամասում տեղ-տեղ աճած խոտածածկը հողային/փորման աշխատանքների ժամանակ կհեռացվի և կպահեստավորվի, իսկ ավելորդ գրունտը շինադրի հետ միասին կտեղափոխվի Եղվարդի քաղաքապետարանի կողմից թույլատրվող աղբավայր:

Գործունեության շրջանակում նախատեսվող կանաչապատման աշխատանքների շրջանակը ներկայացված է 4.2 ենթագլուխում:

Շինարարության ընթացքում գործունեության մերձակայքում առկա բուսականության պահպանությանը և կառավարմանն ուղղված համալիր միջոցառումների ցանկը բերվում է Աղյուսակ 7.-ում ներկայացված բնապահպանական միջոցառումների ծրագրում (2 ենթաբաժին, Բուսականության պահպանության և կառավարման պլան):

### **6.1.6 Սոցիալական ազդեցությունները և մեղմացումը**

Գործունեության ընթացքում հնարավոր սոցիալական ազդեցությունները մեղմացնելու նպատակով աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն սահմանափակ ժամերի՝ 14:00-ից 18:00: Կվերահսկվեն շինարարական մեքենաների տեխնիկական վիճակը, որպեսզի դրանք ապահովված լինեն աղմկակլանիչներով, ժամանակին կվերացվեն սարքավորումների անսարքությունները կամ անսարք վիճակում գտնվողները կփոխարինվեն նորերով:

Հնարավոր սոցիալական ազդեցությունները շին-հրապարակում կբացառվեն նաև աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումների իրականացմամբ, որոնք մանրամասն նկարագրված են Աղյուսակ 6.-ում (1 ենթաբաժին,



Աշխատանքի և առողջության ապահովման պլան), մասնավորապես՝ կիրականցվի հրապարակի ցանկապատում, կողմնակի անձանց մուտքը արգելող նշանների տեղադրում, հրապարակում աշխատող բանվորական կազմին կտրամադրվեն անվտանգության միջոցներ, կապահովվեն խմելու ջրի և հանգստի կազմակերպան պայմանները:

### **6.1.7 Երթևեկության վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումները**

Գործունեության ընթացքում կանխատեսվում են շինարարական մեքենասարքավորումների շարժով պայմանավորված երթևեկության ծանրաբեռնվածություններ: Հաշվի առնելով, որ աշխատանքներն իրականացվելու են Զովունի գյուղում, հնարավոր ազդեցությունները կմեղմացվեն հետևյալ միջոցառումներով: Շինարարական մեքենասարքավորումների տեղաշարժը կազմակերպել շարայումներով, սահմանափակ արագությամբ ( $\leq 30$  կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարի դեպքում, այն կազմակերպել նվազագույնը 30 րոպե ինտերվալով: Նշված ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են *Աղյուսակ 7-ում* (4. գլուխ, Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարում):

### **6.1.8 Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները**

Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- հրդեհի առաջացում
- հեղուկ նյութերի արտահոսք
- աշխատողների վնասվածքներ
- շահագործվող տեխնիկայի հետ վթարներ
- անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ:

Հնարավոր արտակարգ իրավիճակներից և վերոնշյալ ռիսկերից խուսափելու նպատակով շինարարական տեղամասում պարբերաբար կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները՝ այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:
- Շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվելու են հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն: Հրդեհների ռիսկերը մեղմացնելու և/կամ կանխարգելելու նպատակով շինարարական

աշխատանքների տեղամասերում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցվելու են հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

- Բանվորական և ղեկավար կազմը ապահովվելու է սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով:
  - Հեղուկ նյութերը և քսայուղերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
  - Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քսայուղերի հետ առնչվող բոլոր գործողությունները կիրականացվեն հատուկ մասնագիտացված կենտրոններում:
  - Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, իսկ անհրաժեշտության դեպքում կտեղափոխվի բժշկական հաստատությունը:
  - Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան, որը շինարար կապալառուն պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել:
  - Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:
  - Արգելվում է տանիքում և բարձրության վրա աշխատանքներ իրականացնելը, մշուշի, ամպրոպի և քամու 6 բալ արագության գերազանցման դեպքերում:
  - Խտացված գազով բալոնը տեղափոխել միայն հատուկ պատգարակի միջոցով: Չի կարելի բալոնին մոտենալ յուղոտված հագուստով, արգելվում է գազոգնեքատորի մոտակայքում ծխելը:
  - Եռակցման աշխատանքներ իրականացնելու ժամանակ հետևել, որ էլեկտրա և գազաեռակցված սարքերը գտնվեն ճանապարհներից և անցումներից մի կողմ և էլեկտրաեռացման սարքը և եռակցվող նյութը լինեն հողանցված:
- Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկերը, իսկ առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

### **6.1.9 Աշխատանքի անվտանգության և հակահրդեհային միջոցառումներ**

Գործունեության իրականացման ընթացքում կարևորվում է հանրության անվտանգության և առողջության, ինչպես նաև շինարարական կազմակերպության աշխատողների անվտանգության և առողջության ապահովման հարցերին շինհրապարակում, որի համար նախատեսված են մի շարք միջոցառումներ հնարավոր ազդեցությունները և անհարմարությունները բացառելու կամ մեղմացնելու նպատակով:

Շինհրապարակում առողջության և աշխատանքային անվտանգությանն ուղղված կանոնները/միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲՄԾ-ում նկարագրված ընթացակարգի, որոնք համալիր ներկայացված են «Առողջության և աշխատանքի անվտանգության պլան», ինչպես նաև «Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան» ենթաբաժիններում (տես ԲՄԾ):

Շինարարական աշխատանքների ընթացքում խստորեն կպահպանվեն անվտանգության և հակահրդեհային միջոցառումները, մասնավորապես.

- Նախքան աշխատանքի սկսելը կկատարվի շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում և կտեղադրվեն մուտքը արգելող ցուցափեղկեր/նշաններ:
- Շինարարությունում շահագործվող կռունկը պետք է անցած լինի անվտանգության տեխնիկայի փորձաքննության և գրանցված լինի «Տեխնիկայի անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ռեգիստրում:
- Հակահրդեհային անվտանգությունը շինհրապարակում, աշխատատեղում և աշխատանքի տեղամասերում անհրաժեշտ է ապահովել համապատասխան «Հակահրդեհային անվտանգության կանոններ» պահանջներին համապատասխան, ապահովել կրակմարիչի առկայությունը և հրդեհային անվտանգության վերաբերյալ պաստառներն այլն:
- Շինհրապարակի տարածքում հակահրդեհային նպատակով ապահովվելու է ջրային ռեսուրսի համապատասխան քանակի առկայություն և միջոցներով, տեղադրվելով հրշեջ հիդրանտ և ապահովվելով ջրաքանակ,
- Մինչև աշխատանքների սկսելը աշխատողներին պետք է հրահանգավորել անվտանգության տեխնիկայի մասին: Բանվորների աշխատանքների պաշտպանությունը պետք է ապահովվի վարչակազմի կողմից, նրանց անհատական պաշտպանական միջոցներ տրամադրմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ, սաղավարտ և այլն):
- Տանիքի և բարձրության վրա աշխատանքների իրականացման ժամանակ, աշխատանքներն անհրաժեշտ է կատարել անվտանգության գոտիների օգտագործմամբ, որոնք պետք է ամրացվեն կոնստրուկտիվ ճշտված և հուսալի էլեմենտից:
- Եռակցման աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է հետևել, որպեսզի էլեկտրա և գազաեռակցված սարքերը գտնվեն ճանապարհներից և անցումներից մի կողմ և էլեկտրաեռացման սարքը և եռակցվող նյութը լինեն հողանցված:
- Խտացված գազով բալոնները պետք է տեղափոխել միայն հատուկ պատգարակի միջոցով: Բալոնին չի թույլատրվում մոտենալ յուրոտված հագուստով, արգելվում է նաև բալոնների մոտակայքում ծխելը:
- Արգելվում է տանիքում աշխատանքներն իրականացնելը, մշուշի, ամպրոպի և քամու 6 բալ արագությամբ գերազանցման դեպքում:

## 7 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

### 7.1 Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները

Ներկայացվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին կապահովվի Բազմաբնակարան շենքերի թաղամասի կառուցման բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն և շահագործում) բնապահպանական միջոցառումների ծրագրի (ԲՄԾ) ակտիվ և արդյունավետ իրականացմամբ, որի շրջանակում նախատեսվող միջոցառումները համալիր ներկայացված են *Աղյուսակ 6*-ում: ԲՄԾ-ի պատշաճ մակարդակով իրականացումը կկանխարգելի և/կամ կնվազեցնի գործունեության ընթացքում կանխատեսվող անցանկալի բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա:

ԲՄԾ-ն որպես անբաժանելի մաս կցվելու է հիմնական շինարար կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին: Հիմնական շինարար կապալառուն պատասխանատու է լինելու ԲՄԾ-ի իրականացման համար և ընտրվելու է մրցութային կարգով:

Ստորև ամփոփ բերվում են նախատեսվող գործունեությունից ակնկալվող բացասական ազդեցությունները մեղմացնող և/կամ բացառող *հիմնական* բնապահպանական, աշխատանքի և առողջության ապահովմանն ուղղված միջոցառումները.

- տեղեկատվության հրապարակում և հանրային լսումներ,
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում, լուսավորության ապահովում, տեղեկատվական ցուցանակների տեղադրում,
- շինարարական աղբի և ավելորդ ոչ պիտանի գրունտի կանոնավոր հեռացում և թափոնակույտում Զովունիի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,
- հրապարակում կտեղադրվեն կենցաղային թափոնների համար փակ աղբամաններ, իսկ կենցաղային աղբը կհեռացվի հասարակական աղբաման,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերի սահմանում,
- շինարարական մեքենաների տեղաշարժը կիրականացվի սահմանափակ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- շինհրապարակից դուրս գալիս կապահովվի մեքենաների անիվների լվացման միջոցառումներ,

- աղմուկ առաջացնող աշխատանքներն կիրականացվեն թույլատրելի մակարդակների սահմանում և օրվա ցերեկային ժամերին՝ 14.00-18:00,
  - շինարարական նյութերի ձեռք բերումը կիրականացվի լիցենզավորված մատակարարից,
  - վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե/ մետաղական կամ ավազե հիմքերի վրա,
  - արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների ընթացակարգերը և կոնտակտային տվյալները պաստառների ձևով կփակցրվեն հրապարակում, այդ թվում հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ,
  - կիրականացվեն աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումները, ներառյալ՝ բանվորական կազմը կապահովվի սեզոնային արտահագուստով և անվտանգության սաղավարտներով, անհատական պաշտպանիչ դիմակներով և այլն,
  - մեքենաների վառելիքի լիցքավորումը, քսայուղերի փոխարինումը կկազմակերպվի հիմնականում շինհրապարակից դուրս և մասնագիտացված կենտրոններում,
  - նախագծվող տեղամասում կիրականացվեն հետշինարարական բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ՝ ըստ հաստատված նախագծի:
- Չափազրումների իրականացման համար Կառուցապատողը կհամագործակցի նշված աշխատանքներն իրականացնող մասնագիտացված լաբորատորիայի հետ:

## 7.2 Մոնիտորինգ

Շինհրապարակում և հարակից տարածքներում մոնիթորինգի իրականացումը հնարավորություն կտա հսկելու շինարարական աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի, կամ հարակից տարածքների վրա՝ վնասակար ազդեցությունների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Մոնիթորինգի իրականացման հիմնական նպատակն է ստեղծել տեղեկատվություն միջավայրի փոփոխությունների մասին:

Շինհրապարակի համար առաջարկվող մոնիթորինգի միջոցառումները հետևյալն են՝

1. Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգ՝ ամիսը երկու անգամ,
2. Շրջակա տարածքների հողային ծածկույթի մոնիթորինգ՝ ամիսը մեկ անգամ,
3. Տեխնիկական միջոցների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
4. Աղմուկի և թրթռումների մակարդակի չափումներ:

Որպես սահմանային թույլատրելի խտությունները ընդունվելու են. ածխածնի օքսիդի համար՝ 5մգ/մ<sup>3</sup>, ազոտի երկօքսիդի համար՝ 0.2մգ/մ<sup>3</sup>, մրի համար՝ 0.15մգ/մ<sup>3</sup> :

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով, որը նախատեսվում է հողային աշխատանքների ժամանակ /որի տևողությունը երեք ամիս է/ տրամադրվելու է 250.0 հազ.դրամ:

Նախատեսվում է իրականացնել նաև մթնոլորտային օդի որակի, աղմուկի, թրթռման, հողային ծածկույթի մշտադիտարկումներ:

Կառուցապատողի կողմից կանոնավոր մոնիտորինգ է իրականացվելու, որպեսզի վերահսկվի ԲՄԾ-ում նախանշված մեղմացող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը: Մշակված մոնիտորինգի պլանը ներկայացվում է *Հավելված 4*-ում:

Միջոցառումների իրականացման ամենօրյա վերահսկողությունը կիրականացվի տեխնիկական վերահսկման խորհրդատուի կողմից: Տեխնիկական վերահսկողները հսկելու են նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը և ժամանակին տեղեկացնելու են Կառուցապատողին նկատված անհամապատասխանությունների մասին:

Չափագրումների իրականացման համար Կառուցապատողը կհամագործակցի նշված աշխատանքներն իրականացնող մասնագիտացված լաբորատորիայի հետ:



**Աղ. 7 Բնապահպանական միջոցառումների ծրագիր (ԲՄԾ)**

<b>Մեղմացնող միջոցառումներ</b>			
<b>Ծրագրի գործողություններ</b>	<b>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ</b>	<b>Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ</b>	<b>Պատասխանատու մարմին</b>
<b>ՆԱԽԱԳԾՄԱՆ ՓՈՒԼ</b>			
<b>1.</b> Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն	Գործունեությունը կարող է ունենալ բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա և ըստ ՀՀ ՇՄԱԳ օրենքի պահանջում է բնապահպանական պետական փորձաքննություն իրականացում և դրական եղրակացության ձեռք բերում:	– Մշակվել է նախագծվող Բնակելի թաղամասի կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցություն նախնական գնահատման հայտը և ներկայացվել է ՀՀ ՇՄՆ պետական փորձաքննության, դրական եզրակացություն ձեռք բերելու նպատակով:	«Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ
<b>2.</b> Հանրային լուսններ և հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են ազդել կառուցապատման ժամկետների վրա:	– Նախագծվող բնակելի շենքերի և նախատեսվող գործունեություն ընթացքում շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցության վերաբերյալ առաջին հանրային քննարկումն իրականացվել է Զովունի գյուղի վարչական ղեկավարի նստավայրում: Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում՝ օրենքով սահմանված կարգով: – Երկրորդ հանրային քննարկումը տեղի կունենա ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացվող պետական փորձաքննության շրջանակում:	«Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ, Զովունիի գյուղապետարան
<b>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ (ԿԱՌՈՒՑՈՒՄ)</b>			
<b>1.Առողջության և աշխատանքային անվտանգության պլան</b>			
<b>3.</b> Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները	Բնակելի շենքերի կառուցապատման գործընթացի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման: – Շին առարկաների ոչ ճիշտ դասավորվածությունը և շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումը կարող են առաջացնել	– Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: – Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար, մասնավորապես, իրականացնել տարածքի ցանկապատում, ստեղծել պահակակետեր, տեղադրել ցուցանակներ, արգելող պաստառներ այլ: – Անհրաժեշտ է ապահովել <b>կրակմարիչի առկայությունը</b> և հեշտ	Կապալառու

	<p>աշխատանքի առողջության անվտանգության խնդիրներ:</p>	<p>և</p> <p>հասանելիությունը շինհրապարակում և բոլոր մեքենաներում:</p> <ul style="list-style-type: none"> <li>– Անհրաժեշտ է ապահովել <b>առաջին բուժ օգնության</b> դեղատուփի առկայությունը և հեշտ հասանելիությունը շինհրապարակում:</li> <li>– Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանիչ սարքավորումով:</li> <li>– Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել և հաշվետվության ձևով ներկայացնել ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ-ին:</li> <li>– Աշխատողներին անհրաժեշտ է տրամադրել կոնկրետ աշխատանքի անվտանգության հրահանգավորում՝ աշխատանքը սկսելուց առաջ: Հրահանգավորումը պատշաճ պետք է գրանցել աշխատանքի անվտանգության վարման գրանցամատյանում (ՀՀՇՆ I-3.01.01-2008):</li> <li>– Անհրաժեշտ է խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը:</li> <li>– Անհրաժեշտ է ապահովել բանվորների աշխատանքի պաշտպանության միջոցառումները անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան:</li> <li>– Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պետք է պահպանվեն շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:</li> </ul>	
<b>2. Շրջակա միջավայրի պահպանության պլան</b>			
<p>5. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները՝ պամոնտաժման և կառուցման աշխատանքներ, շինանյութերի և շինադրի փոխադրումներ, և այլն:</p>	<p>– Փոշու և այլ ծխազագերի արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործուման հետևանքով:</p>	<ul style="list-style-type: none"> <li>• <b>Մթնոլորտային օդի աղտոտման և փոշու կառավարում</b></li> <li>– Անհրաժեշտ է շինհրապարակում պարբերաբար իրականացնել <b>զրգանման և փոշենստեցման միջոցառումներ</b>:</li> <li>– Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել <b>պաստառներով ծածկված</b> վիճակում՝ փոշու հնարավոր</li> </ul>	<p>Կապալառու</p>

	<p>– Աղմուկի և թրթռումների մակարդակի աճ շին աշխատանքների ընթացում:</p>	<p>տարածումը բացառելու համար:</p> <ul style="list-style-type: none"> <li>– Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների <b>արագությունը (≤30 կմ/ժ) փոշու</b> և այլ ծխագազերի քանակը նվազեցնելու նպատակով:</li> <li>– Անհրաժեշտ է պարբերաբար ստուգել մեքենասարքավորումների տեխնիկական վիճակը:</li> </ul> <p><b>• Աղմուկի և թրթռումների կառավարում</b></p> <ul style="list-style-type: none"> <li>– Շին հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներին:</li> <li>– Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողությունների ընթացքում մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակալիչների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը:</li> <li>– Աղմուկ առաջացնող գործողություններն անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին՝ <b>14:00-18:00:</b></li> <li>– Բոլոր մեքենա-սարքավորումները պետք է ապահովված լինեն համապատասխան <b>խլացուցիչներով:</b></li> <li>– Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը, իսկ մեքենաների կամ խլացուցիչների անսարքինության դեպքում տվյալ մեքենան անհրաժեշտ է դուրս բերել շինհրապարակից:</li> <li>– Անհրաժեշտ է խուսափել թրթռումներ առաջացնող աշխատանքներ կատարելուց, նման աշխատանքների անհրաժեշտության դեպքում խստորեն իրականացնել ցերեկային ժամերին և ՀՀ թույլատրելի նորմերի մակարդակներում:</li> <li>– Անհրաժեշտ է ապահովել բոլոր բանվորներին համապատասխան ԱՊՄ-րով, այդ թվում՝ ականջակալներով:</li> </ul> <p><b>• Բուսականության պահպանում և կառավարում</b></p> <ul style="list-style-type: none"> <li>– Անհրաժեշտ է տեղամասի մերձակայքում առկա բուսականությունը պաշտպանել շին գործողություններից, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից և հնարավոր այլ</li> </ul>	
--	--	---	--

	– Տարածքում առկա և մերձակայում առկա բուսականության վրա ազդեցություն:	ազդեցություններից:	
<b>3. Շինարարական հրապարակի կազմակերպման պլան</b>			
7. Շին հրապարակի կազմակերպում:	Շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումից բխող ազդեցություններ, ազդակիր կառույցների և սպասարկվող անձնակազմի վրա:	<p>- Անհրաժեշտ է կազմակերպել շին հրապարակը հրապարակի կազմակերպման սխեմային համաձայն՝ ապահովելով <b>նախատեսվող մուտքերը և ելքը:</b></p> <p>- Անհրաժեշտ է իրականացնել ժամանակավոր <b>անթափանց ցանկապատում</b> ողջ շին-հրապարակի պարագծով:</p> <p>- Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի <b>ծրագրի ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում</b>, ինչպես նաև <b>փակցնել հակահրդեհային անվտանգության պատտաններ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ</b> և այլն տեղադրում:</p> <p>- Շինհրապարակի տարածքը պետք է պահել մաքուր և կարգավորված, իրականացնել շինհրապարակի և մոտեցնող ճանապարհների <b>ամենօրյա մաքրում՝ ցեխի և փոշու տարածումը</b> կանխելու նպատակով:</p> <p>-</p>	Կապալառու
<b>4. Երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարման պլան</b>			
8. Շինհրապարակ մուտք և ելք գործող մեքենաներ	<p>- Երթևեկության խափանումներ</p> <p>- Երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ</p> <p>- փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ</p> <p>- հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում</p> <p>- շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհների վնասի պատճառում</p>	<p>- Մեքենաների և բեռնատարների երթևեկությունն անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհներին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով:</p> <p>- Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը և մոտեցումն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես շին հրապարակ մուտքի և ելքի համար նախատեսված ճանապարհով:</p> <p>- Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ:</p> <p>- Անհրաժեշտ է ապահովել <b>բեռնատարների ծածկով երթևեկումը</b> շինհրապարակը լքելիս:</p> <p>- Անհրաժեշտ է ապահովել, որպեսզի փոխադրամիջոցները սարքավորված լինեն աղմուկի <b>արդյունավետ կլանիչներով և խլացուցիչներով:</b></p> <p>- Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր գնում՝ վառելանյութի և յուղի հոսքը կանխելու համար:</p>	Կապալառու

		<p>- Անհրաժեշտ է դադարեցնել <b>արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը</b> և փոխարինել պատշաճ վիճակի մեքենաներով:</p> <p>- Նախքան շինհրապարակից հեռանալն անհրաժեշտ է ապահովել <b>անվադողերը մաքրելու միջոցներով</b> (աշխատանքային տեղամասում <b>կոպճային մակերևույթների</b> և փոխադրամիջոցների <b>լվացման միջոցներ</b>՝ համապատասխան արտահոսքը կանխարգելման համակարգով) շինարարական աղբն ու ցեխի տարածումը կանխելու համար:</p> <p>- Անհրաժեշտ է մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջոտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջոտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար:</p> <p>- <b>Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները</b> պետք է <b>միշտ ազատ</b> լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:</p>	
<b>5. Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան</b>			
<p><b>9.</b> Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակներ, դժբախտ պատահարներ և այլն</p>	<p>- Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:</p>	<p>- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին հրապարակում:</p> <p>- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը:</p> <p>- Անհրաժեշտ է իրականացնել նյութերի անվտանգության տվյալների թերթիկների, արտակարգ իրավիճակների արձագանքման քայլերի մասին տեղեկացնող պաստառների/պլակատների տեղադրում:</p> <p>- Արտահոսքը մաքրող գործիքները պետք է ճիշտ ձևով պահեստավորել, որպեսզի անհրաժեշտության դեպքում դրանք հեշտությամբ օգտագործվեն, ինչպես նաև աշխատող անձնակազմը պետք է տեղեկացված լինի դրանց ճիշտ գործածության մասին:</p>	<p>Կապալառու</p>

		<ul style="list-style-type: none"> <li>- Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար:</li> <li>- Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:</li> <li>- Քիմիական և այլ վտանգավոր նյութերն, վառելանյութն պետք է օգտագործել միայն շինմոնտաժային աշխատանքներում և բացառել այլն նպատակով օգտագործումը: Դրանք անհրաժեշտ է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում, որն ապահովված է անանցանելի/ անթափանց հատակով և պատնեշով:</li> <li>- Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պատասխանների առկայությունը:</li> </ul>	
<b>6. Թափոնների և նյութերի կառավարման պլան</b>			
<p><b>10.</b> Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ</p>	<p>- Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ, բուսահող ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք պոտենցիալ վտանգ են ներկայացնում շրջակա միջավայրին:</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Անհրաժեշտ է շինարարական աղբը հեռացնել բացառապես գործունեության ընթացքում նախատեսված աղբավայր (100 մ հեռավորության վրա գտնվող հողատարածք):</li> <li>- Կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարական թափոններն ու աղբը՝ փոշին և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար:</li> <li>- Անհրաժեշտ է դասակարգել աղտոտված հողը, աղբն ու շինարարական մյուս թափոններն ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ և վտանգավոր, դրանց առաջացման դեպքում:</li> <li>- Աղտոտված հողը, անհրաժեշտ է տեղադրել աղբի համար թույլատրված վայրերում:</li> <li>- Շին հրապարակի տարածքի սահմաններում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր:</li> <li>- Հրապարակում նախատեսել կենցաղային աղբի հավաքման համար նախատեսված աղբաման, իսկ այնուհետև հավաքված աղբը հեռացնել հասարակական աղբաման:</li> </ul>	<p>Կապալառու</p>



		<p>- Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և աղբի կուտակումը շինարարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև տարածքին կից տեղադրված հասարակական աղբամանների օգտագործումը՝ շին թափոնների հեռացման նպատակով:</p> <p>- Անհրաժեշտ է հրապարակում պահել <b>կեղտաջրերի (բետոնաջուր, և այլն)</b> հեռացման համար նախատեսված տարա (≥10 խ . մ), որտեղ նստվածքի մեխանիկական նստեցումից հետո ջուրը կարելի կլինել օգտագործել ջրցանման նպատակով կամ ջրի գոլորշացումից հետո նստվածքը/չոր մնացորդը հեռացնել շին/աղբի հետ:</p> <p>- Հեղուկ վառելիքի կամ յուղանման նյութերի տարաները անհրաժեշտ է պահել <b>անթափանց հիմքերի (բետոնե, մետաղական) կամ ավազե հիմքի</b> վրա՝ հողային շերտի վրա հնարավոր արտահոսքերը կառավարելու նպատակով:</p>	
<b>7. Պատմամշակութային և հնագափտական արժեքների կառավարում</b>			
<p><b>11. Պատմամշակութային և հնագափտական արժեք ունեցող օբյեկտների հայտնաբերում</b></p>	<p>- Անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և անմիջապես տեղեկացնել իրավասու և պատասխանատու կառույցներին ու կազմակերպություններին</p>	<p>- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջի կատարում՝ այն է.  <i>&lt;&lt;Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին&gt;&gt;:</i></p>	<p>Կապալառու</p>
<b>8. Աշխատանքային տեղամասի վերականգնման և բարեկարգման պլան</b>			
<p><b>12. Շինհրապարակի Վերականգնումը, տեղամասի բարեկարգում/կանաչապատում</b></p>	<p>- Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շինարարական նյութերը թափոնները և շին պարագաները:</p>	<p>- Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն:</p> <p>- Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները:</p> <p>- Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը:</p> <p>- Անհրաժեշտ է կատարել հանրային տարածքի բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի <b>բարեկարգման և կանաչապատման պլանի</b> համաձայն:</p>	<p>Կապալառու</p>
<b>ՀԵՏ ԵՐԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ</b>			

<p><b>13.</b> Թերությունների վերացման աշխատանքներ</p>	<p>Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները</p>	<p>- Անհրաժեշտ է ապահովել տնկված կանաչ զանգվածի 90% կաչողականությունը և աճը: Հակառակ դեպքում անհրաժեշտ է վերատնկել և փոխարինել բոլոր վնասված կամ անառողջ բուսատեսակները:</p>	<p>« Մազնոլիա Կոմֆորտ » ՍՊԸ Կապալառու</p>
<p><b>14.</b> Բուսականության վերականգնում</p>	<p>Բուսականությունը չի աճում սպասվածին համաձայն</p>	<p>- Անհրաժեշտ է ներառել կանաչապատ գոտին կառուցապատվող բնակելի շենքերի կանաչապատ տարածքների սպասարկման պլանում: - Անհրաժեշտ է իրականացնել կանաչապատված տարածքի աճի և վիճակի մշտադիտարկումներ:</p>	<p>« Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ</p>
<p><b>15.</b> Տարածքի բարեկարգում</p>	<p>Միջավայրի անբարեկարգ տեսք</p>	<p>- Բոլոր մակերեսներն այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնվելու են՝ բերվելով սկզբնական վիճակի</p>	<p>« Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ</p>
<p><b>16.</b> Շին աղբի հեռացում</p>	<p>Տարածքի անբարեկարգ վիճակ</p>	<p>- Ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները կհեռացվեն շին հրապարակից</p>	<p>« Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ</p>
<p><b>17.</b> Կանաչապատում</p>	<p>Անկանոն կանաչապատման ռիսկ</p>	<p>- Ծառերի և թփերի տնկման վայրը և քանակը կհամապատասխանեցվի կանաչապատման նախագծին</p>	<p>« Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ</p>
<p><b>18.</b> Ծառերի և թփերի կաչողականության ապահովում</p>	<p>Զորացման վտանգ և խնամքի պակաս</p>	<p>- Շարունակական խնամքի միջոցով կապահովվի ծառերի և թփերի 90% կաչողականությունը</p>	<p>« Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ</p>

## **8 ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ**

Ներկայացվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային քննարկումներն իրականացվել են 2021թ-ի մայիսի 24-ին, ժամը 15:00-ին, Զովունիի համայնքապետարանի դահլիճում: Հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2021թ-ի մայիսի 12-ի համարում հանրային ծանուցման գործող ընթացակարգին համաձայն, այն է՝ քննարկումն անցկացնելու օրվանից առնվազն 7 աշխատանքային օր առաջ: Հանրային քննարկման մասին հայտարարությունը և նախագծային փաստաթղթերը էլ-փոստով նախապես տրամադրվել են Զովունիի համայնքապետարանին՝ համայնքապետարանի պաշտոնական կայքում հրապարակելու և շահագրգիռ կողմերի համար նյութերն հնարավորինս հասանելի դարձնելու խնդրանքով:

Հանրային քննարկման հայտարարությունը, մասնակիցների ցանկը և արձանագրությունը ներկայացված են սույն ՆԳՀ-ի Հավելված 5-ում, իսկ տեսագրությունը ներառված է ՆԳՀ-ի փաթեթում՝ առանձին էլեկտրոնային կրիչով:

«ՇՄԱԳ և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված ՏԻՄ նախնական համաձայնության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 6-ում:

## 9 ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. հունիսի 21:
- ԱԶԲ 2015, Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011 ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- <http://xn--80aajzhcnfck0a.xn--p1ai/PublicDocuments/1310049.pdf>
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- Տեղեկագիր: ՀՀ շրջակա միջավայրի մասին: Զովունի: 2019թ. .:
- [www.arlis.am](http://www.arlis.am)
- [www.atdf.am](http://www.atdf.am)

# 10 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## 10.1 Հավելված 1. Ճարտարապետահատակագծային առաջադրանք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
**Կոտայքի մարզ, Եղվարդ համայնք**  
(մարզը, համայնքը)

**ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ**  
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՂՈՒՄՔ)

N 95 30 ապրիլի 2021թ.

Օբյեկտ

Բազմաբնակարան շենքերի թաղամաս (4-րդ կատեգորիա)  
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

Կառուցման  
(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

աշխատանքային նախագծային փաստաթղթերի մշակման համար:

ժխկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը

Կոտայքի մարզ, Եղվարդ համայնք, Զովունի, 6-րդ փողոց, 21 հասցեում  
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող

<<ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ>> ՍՊԸ-ի տնօրեն Արա Ավետիսյան  
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, **Ք. Երևան, Կոնդ 44**  
բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը

Կառուցապատողի

հայտը 29.04.2021թ.

(կառուցապատման նպատակով << օրենսդրությամբ սահմանված

Անշարժ գույքի վկայական թիվ 21042021-07-0017

կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը

Երկու տարի

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

**ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

*(աստղանիշով (\*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփի սխեմայով՝ Մ 1:500)*

1. Հողամասը գտնվում է

բնակելի կառուցապատման

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (\*) Հողամասի չափերը

1.207106հա, 2.12035հա

(հողամասի սահմանները կողորհնատային նշահարմամբ, մակերեսը (հա)

3. Հողամասի առկա վիճակը

Չարթ ռելեֆային ազատ տարածք

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը)



4. Տրանսպորտային պայմաններ

(օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

Սպասարկման ճանապարհ

5. (\*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

Չկան

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (\*) Կից հողամասեր

Կից տնամերձ հողեր

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

Չկան

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (\*) Հատակագծային սահմանափակումներ

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԼԱՆՏՆԵՐԸ**

*(աստղանիշով (\*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

9.

Ճարտարապետահատակագծային պահանջներ

Նախագիծն իրականացնել նախագծային և տեխնիկական նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ձևակառուցողների և արտաքին դեմերի, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (\*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

Ըստ նորմերի

9.2. (\*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

Ըստ նորմերի

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

Մասնաշենքերը նախագծել մինչև 3 նկուղային և մինչև 13 վերգետնյա հարկերով, սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ 11-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը



հողամասի մակերեսին)	
9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)	Մինչև 40%
9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)	40% և ավելի
9.7. այլ պահանջներ	
10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը	
11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները	
12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ	Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ
12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում	<<Վեոլիաջուր>> ՓԲԸ (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.2. (*) էլեկտրամատակարարում	<<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.3. (*) գազամատակարարում	<<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը	(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)
12.5. թույլ հոսանքներ	Չկան
12.6. աղբահանություն	Իրականացվում է
13. Տարածքի ինժեներական նախապատրաստում	Հարթ ռելիեֆ, կազմակերպված ջրահեռացում (ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)
14. Բարեկարգում	Տարածքը բարեկարգել (լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)
15. Շինարարական նյութեր	Տեղական շինանյութեր շինվածքներ և այլ նյութեր ըստ նախագծի (շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)
16. Պաշտպանական կառույցներ	(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)



17. Հակահրդեհային պահանջներ

Ըստ նորմերի  
(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

\_\_\_\_\_

19. Շրջակա միջավայրի պահպանում

\_\_\_\_\_ (շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

Շինարարական աղբի կազմակերպված տեղափոխում

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, բաղաբային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

Հնարավոր է երկու փուլով՝ նախագիծ և աշխատանքային նախագիծ

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

ՀՀ կառավարության 2015թ. Մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգին համապատասխան

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

Համայնքում

(իրավատու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շահագրգիռ մարմինների հետ էքզիպիցիոն նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

\_\_\_\_\_ (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

\_\_\_\_\_ (նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

\_\_\_\_\_

27. Այլ պայմաններ

Չխանգարել այլանձանց իրավունքները

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻՄԱՐԶԻ  
ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



*[Handwritten signature]*

Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

Կ. Տ.

10.2 Հավելված 2. Շինմոնտաժային աշխատանքների հաջորդականությունը և ժամանակացույցը

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	1-ին ՏԱՐԻ												2-րդ ՏԱՐԻ												3-րդ ՏԱՐԻ											
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1. Շին հրահրման արձեղանի կազմակերպում	[Bar from day 1 to 3]																																			
2. Գործարարական աշխատանքներ	[Bar from day 3 to 6]																																			
3. Հիմքերի իրականացում / ԱՏՈՐԳԵՏՆԱԾ ԳՐԱԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ	[Bar from day 6 to 11]																																			
4. ԱՏՈՐԳԵՏՆԱԾ ԳՐԱԿԻ ԶՐԱՍԵԿՈՒՄԱՑՈՒՄ	[Bar from day 9 to 11]																																			
5. ԳՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՏ ԼԻՑԶ և ՏՈՓՍՈՒՄ	[Bar from day 11 to 12]																																			
6. Շենքի վերգեղանի կողմից ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿՈՆՏՐՈՒԿՑՄԱՆ ՌԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ	[Bar from day 12 to 24]																																			
7. ՏԱՆՔԻ ԱՆՋՐԱՆՑԻԿ ՇԵՐՏԵՐԻ ՊԱՏ.	[Bar from day 24 to 25]																																			
8. ՄԻՋՆՈՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ	[Bar from day 24 to 32]																																			
9. ՇՈՒԻՑՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՐԱԿՈՒՄ	[Bar from day 24 to 32]																																			
10. ԱՐՏԱՔԻՆ ԻՆՏԵՆՏԻՎԱՆ ԳՇԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ	[Bar from day 24 to 25]																																			
11. ՆԵՐՔԻՆ ԻՆՏԵՆՏԻՎԱՆ ԳՇԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ	[Bar from day 24 to 32]																																			
12. ԼՈՒՍԱՈՒՑՆԵՐԻ ԵՎ ՊՈՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ	[Bar from day 24 to 32]																																			
13. ՎԵՐԵԼԱԿՆԵՐ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԻՎԱԿ	[Bar from day 24 to 32]																																			
14. ՆԵՐՔԻՆ ԳՐԱԿՈՒՄՆԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	[Bar from day 24 to 32]																																			
15. ՏԱՐԱԾՔԻ ԱՄՔՐՈՒՄ / ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ	[Bar from day 24 to 32]																																			
16. ԻՆՃ. ԳՇԵՐԻ ԵՎ ԱՎՏՈՒՄՍ. ՓՈՐՁԱՐԿՈՒՄ	[Bar from day 32 to 33]																																			
ԱՆԽԱՊԱՏՐԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	[Bar from day 1 to 3]																																			
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	[Bar from day 3 to 32]																																			
ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՅՈՒՆԻ ԶԵՎԱԿԵՐՊՈՒՄ	[Bar from day 32 to 33]																																			

ԸՆԿՆՈՒՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԿՆՈԴՈՒԹՅՈՒՆԸ -- 36 ԱՄԻՍ

### 10.3 Հավելված 3. Անշարժ գույքի սեփականության վկայական



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՎԿԱՅԱԿԱՆ**

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 21 ապրիլի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

- 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**  
«ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ
- 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**  
Մարզ Կոտայք, համայնք Եղվարդ գյուղ Ջովունի 6-րդ փողոց 21
- 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**  
Անշարժ գույքի տարածամկետ վճարումով առուվաճառքի պայմանագիր 15.04.2021թ-ի N 974
- 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**  
Կադաստրային ծածկագիրը՝ 07-029-0020-0009, 07-029-0020-0009  
Մակերեսի չափը (հա)՝ 1.207106, 2.12035  
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի  
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Այլ հողեր, Ընդհանուր օգտագործման  
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 21042021-07-0017, գաղտնաբառ՝ SWDKCUADBZDJ**

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի  
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 1/2

### 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 21042021-07-0017, գաղտնաբառ՝ SWDKCUADBZDJ

Փաստաթղթի իսկությունը և վավերացման ամսաթիվը է ստորագրել Կադաստրի կոմիտեի կայքի վեբ-էջում [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքի միջոցով

Էջ 2/2



Կադաստրի կոմիտե



**10.4 Հավելված 4. Բնապահպանական մեղմացնող միջոցառումների մոնիտորինգի պլան**

Մոնիտորինգ						
Վայրը/ Գործողությունը/ Փուլը	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պատասխանատուներ	Մոնիտորինգի հաճախականություն
<b>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ</b>						
1. Աշխատանք ունենալու հնարավորություններ	Աշխատուժը համալրված է տեղացի բնակիչներից, կանանցից և ցածր որակավորում ունեցող աշխատողներից	Շինարարական տեղամաս	Փաստաթղթերի ստուգում այդ թվում՝ կապալառուի կողմից աշխատատեղեր, նախատեսված են տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց համար	Կապալառուի կողմից աշխատանքի ընդունված տեղաբնակ աշխատողների, ցածր որակավորում ունեցողների և կանանց թիվը	«Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ, հնարավոր ենթակապալառու մասնագիտացված կազմակերպություններ	Կսահմանվի Կապալառուի կողմից աշխատուժի համալրման պլանի մեջ դիտարկել շինարարական գործողությունների մոբիլիզացիոն փուլում
2. Հանրային լսումներ և կապը հանրության հետ	Հանրության տեղեկացվածությունը շինարարության փուլերի վերաբերյալ Ազդակիր կողմերի տեղեկացվածությունն կառուցապատման վերաբերյալ	Շինարարական տեղամաս	Փաստաթղթերի ստուգումներ: Շինարարական տեղամասերի ստուգայցեր Հանրային լսումներ Բողոքների գրանցամատյանի ստուգումներ Տեղեկատվական պաստառների ստուգումներ	Բողոքներին/առաջարկությունները հասցեագրվել են բոլոր պահանջվող ընթացակարգերին համապատասխան	«Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ, հնարավոր ենթակապալառու մասնագիտացված կազմակերպություններ	Հանրային լսումները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ: Բողոքների մոնիտորինգ կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
3. Շրջակա միջավայրի պահպանություն	Նստվածքների առաջացում Փոշու և այլ օդի աղտոտիչների	Շին տեղամաս և շինհրապարակից 50 մ	Ակնադիտական ստուգումներ շինհրապարակի	Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը:	«Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ, հնարավոր ենթակապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան

	արտանետումներ Աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում	հեռավորության վրա գտնվող փոշու, աղմուկի, թրթռումների զգայուն ընկալիչներ	ստուգայցերի միջոցով: Բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում: Փոշու մակարդակների գործիքային ստուգում և վերլուծություն բողոքների առկայության դեպքում՝ նախապես մշակված պլանի համաձայն:	Փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում:	մասնագիտացված կազմակերպություններ	
5. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր	Շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը, հատակագիծը և կառավարումը:	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառված անհարմարություններ:	Փաստաթղթերի ստուգում: Շին աղբի և թափոնների տեղադրման վայրերի ստուգայցեր	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրը և հատակագիծը համապատասխանում են պետ մարմինների կողմից թույլատրվածին և Տարածքի կառավարման պլանին: Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	«Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ, հնարավոր ենթակապալառու մասնագիտացված կազմակերպություններ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
6. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը	Երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը: Առևտրային-հասարակական գործունեությանը և հարևան բնակչությանը պատճառվող անհարմարություններ և անվտանգության հարցերը Ճանապարհներին և այլ կառույցներին՝ հատկապես ջրահեռացման համակարգերին պատճառվող վնասներ:	Ճանապարհների օգտագործում, սարքավորումներ ի և Նյութերի տեղափոխության համար: Շինհրապարակի մոտեցման մուտքերը	Փաստաթղթերի ստուգում Շինհրապարակ կատարած ստուգայցեր	Երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը Պլանի մասնագրերին: Գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	«Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ, հնարավոր ենթակապալառու մասնագիտացված կազմակերպություններ	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
7. Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	Վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես	Շինարարական տեղամաս	Փաստաթղթերի ստուգում Շինհրապարակ	Պատահարների դեպքում պատահարների հաշվետվության ձևի վարում:	«Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ, հնարավոր ենթակապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան



	տեղի ունեցող արտահոսքեր		կատարած ստուգայցեր	Պատահարները կառավարվում են Արտակարգ իրավիճակների պլանին համապատասխան:	մասնագիտացված կազմակերպություններ	
8. Թափոնների և շին. նյութերի կառավարում	Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության ընթացքում	Շինարարական տեղամաս	Փաստաթղթերի ստուգում: Շինհրապարակ, թափոնավայրեր կատարած ստուգայցեր:	Շին աղբը, կենցաղային աղբը և ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին և հրահանգներին համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում: Թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:	«Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ, հնարավոր ենթակապալառու մասնագիտացված կազմակերպություններ	
9. Շինհրապարակի վերականգնում, կանաչապատում և տարածքի բարեկարգում	Շինհրապարակը մաքրված է, նույնը և թափոնները հեռացված են: Բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են: Շինհրապարակի տարածքը բարեկարգված է:	Շինարարական տեղամաս	Շինհրապարակի վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլանն առկա է: Բոլոր մակերեսները այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը:	Ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացված են շինհրապարակից: Բուսականության վայրը և քանակը համապատասխանում են նախագծի կանաչապատման պլանին: Ապահովված է բուսականության 90% կաշտողականությունը:	«Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ, հնարավոր ենթակապալառու մասնագիտացված կազմակերպություններ	
<b>ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ) ՓՈՒԼ</b>						
11.Տարածքի բարեկարգում	Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Կանաչապատման բոլոր տեղամասերը	Ստուգայցեր	Թփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ	«Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ, հնարավոր ենթակապալառու մասնագիտացված կազմակերպություններ	

# 10.5 Հավելված 5. Հանրային քննարկումների հայտարարություն, մասնակիցների ցանկ և արձանագրություն



մար նոր խաղահրապարակ կառուցելու և կայարանին կից շինությունը համայնի համար ժամանցի կենտրոն դարձնելու հնարավորությունները: Ա. Մելիկյանը դասընթացներին հայտնեց արգելափակումները և օրագրերի իրականացմանը:

### Հանդիպում դերասանուհու հետ

Մեծիան Զորյանի տուն-թանգարանի համալսարանի հրավերով լոնոնի թատերասերների հյուրն էր դերավեսի ժամանակված դեմեթրիոս Ծելոկիցի և թատերի վաստակաւաս արտիստ, «Խնձորի այգին» հանրահայտ ֆիլմի հեղուակի Սոֆիկ Մարգարյանը: Ասաց, որ առաջին անգամ է այցելում տուն-թանգարան, բայց խնձորի այգում, ժամոթացավ թանգարանի նյութերին: Փոխանցեցին Ջիվան Մարգարյանը համառոտ ներկայացրեց դերասանուհու անցած ուղին, մի հասկանալի ցուցադրվեց ֆիլմից, ներկաները գնահատեցին և նրա գործի արժեքնորման խոսքեր ասացին: Քիչ անց սկսվեց վարդիպատակ դասը. Ա. Մարգարյանը ներկաներին հետաքրքիր հուշեր դասեց թե «Խնձորի այգին» ֆիլմի նկարահանումներից և թե այդ դերավեսի իր խաղընկեր այնպիսի մեծերից, ինչպիսիք են Միկե Մկրտչյանը, Սոս Մարգարյանը, Խորեն Աբրահամյանը, Գայյա Լուկանցը, Ազատ Շերենցը և այլն:

Գաղին ԱՍՏՆՅԱՆ  
Լուի

«Երջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. 30-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (երրորդ փուլ) 2021 թ. մայիսի 26-ին, ժամը 11:00-ին Արագածոտնի մարզի Կարենաղբյուրի համայնադեպարտման շենքում տեղի կունենա Կարենաղբյուրի տեղիքի համալսարանի «Արվան» շենքում տեղի կունենա Երջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հասկանալի վերաբերյալ հանրային քննարկումներ: Հարցերի դեպքում զանգահարել հեռ. 099991155:

Ինչպես համայնադեպարտման խաղընկեր դասարանի Լոս-1 թնակավայրերի թվ գանգը, 95.016, մեկնարկվել Միջուկը կայանում 2021 թ: Հայտերն քննարկում են միջուկը: Կայանում տեղի կունենա խաղընկեր և էլեկտրաստանի հայտերը: Կայանում տեղի կունենա խաղընկեր հայտեր: 31 դրամ, Լույսը կից տեղեկություն:

Ինչպես համայնադեպարտման խաղընկեր դասարանի Լոս-1 թնակավայրերի 30 հայտերում գանգը, 67.480, 11 Լոս-2 թնակավայրերի թվ գանգը, 42.016, 10-ի մեկնարկվել Լոս-3 թնակավայրերի թվ գանգը, 253.016, 10-ի մեկնարկվել Լոս-4 թնակավայրերի թվ գանգը, 148.016, 10-ի մեկնարկվել: Կայանում տեղի կունենա խաղընկեր և էլեկտրաստանի հայտերը: Կայանում տեղի կունենա խաղընկեր հայտեր: 31 դրամ, Լույսը կից տեղեկություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԻ ԱՊՐԵՍՍ**

«Երջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. 30-110-Ն/ համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2021թ-ի մայիսի 24-ին ժամը 15:00-ին Կոտայքի մարզի Եղվադ համայնի Շավոնի գյուղի վարչական կենտրոնի Կոտայքի մարզի Կոտայքի մարզի Եղվադ համայնի Շավոնի գյուղում քննարկի թաղամասի կառուցման մասին վերաբերյալ հանրային քննարկում և քննարկումներ: Փաստաթղթերի կարելի է ծանոթանալ «Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ գեներալական գրասենյակում՝ հասցե: Ի. Երևան, Կոնղ 44, ինչպես նաև «ԻՊԻ Թատերադրամ» ՍՊԸ քննարկության գրասենյակում՝ հասցե: Ի. Երևան, Յոմանյան 8, 5-րդ հարկ, 504 սենյակ:

Կախարհախոյ հանրային քննարկում ու քննարկումները իրականացվելու են՝ դասարանում ժամանակից մինչև ամիսներ ամիսներ ամիսներ կառավարություն ու քննարկումները օրվա և ժամի սրտից ՀՀ օրենսդրության գործող սահմանափակումները: Քննարկումների թվում մասնակիցները կարող են դիմել նաև, իսկ քննարկումների վայրում հասանելի կլինի թանգարան հանրապետության տեղեկատվական կենտրոն:

**Հայտարարություն**

2021 թ. հունիսի 14-ին ժամը 11:00-ին Գեղարևոտնի մարզի Վարսի համայնադեպարտման տեղի կունենա համայնադեպարտման քննարկումները հանդիպարող Լոս 1 Մասն-Երևան մարզի 36/1 հայտի 05-086-0119-0126 ծածկագրով 0.078538 հա, ԼՈՏ 2 Մասն-Երևան մարզի 26/2 հայտի 05-086-0119-0123 ծածկագրով 0.078538 հա, ԼՈՏ 3 Մասն-Երևան մարզի 36/1 հայտի 05-086-0119-0125 ծածկագրով 0.048301 հա, ԼՈՏ 4 Մասն-Երևան մարզի 24/1 հայտի 05-086-0119-0124 ծածկագրով 0.018579 հա, ԼՈՏ 5 Մասն-Երևան մարզի 26/1 հայտի 05-086-0119-0131 ծածկագրով 0.012735 հա, ԼՈՏ 6 Մասն-Երևան մարզի 20/1 հայտի 05-086-0119-0114 ծածկագրով 0.027775 հա, ԼՈՏ 7 Մասն-Երևան մարզի 22/1 հայտի 05-086-0119-0115 ծածկագրով 0.016514 հա, ԼՈՏ 8 Մասն-Երևան մարզի 36/1 հայտի 05-086-0119-0119 ծածկագրով 0.015058 հա, ԼՈՏ 9 Մասն-Երևան մարզի 30/1 հայտի 05-086-0119-0116 ծածկագրով 0.009985 հա, ԼՈՏ 10 Մասն-Երևան մարզի 14/1 հայտի 05-086-0119-0129 ծածկագրով 0.005651 հա, ԼՈՏ 11 Մասն-Երևան մարզի 128/1 հայտի 05-086-0119-0123 ծածկագրով 0.092017 հա թնակավայրերի հասարակական կառուցարանները հողազուտների ամուրջ վաճառ: Եզված հողավայրերի 1 10-ի մեկնարկում գինը 792 ՀՀ դրամ է: Ամուրջի մասնակցության գումարը՝ 1000 դրամ, մեխանիզմը՝ չվար հողամասի մեծամասնությունը գին 50%-ի չափով, սակարկության հայտի չափը՝ մեխանիզմը գին 5%-ի չափով: Ամուրջի որված հողի նկատմամբ տեղեկություններ և այլ տեղեկություններ չկան: Ամուրջի մասնակցության հայտերը քննարկում են մինչև 2021 թվականի հունիսի 2-ը ժամը 18:00: Լույսը կից տեղեկությունները հանար դիմել Վարսի համայնադեպարտման:

Դեռ. 0261-2-74-63 Վարսի համայնադեպարտման

Աստիկ Կալոյի կոնսերվատորիայից 2 ման թիվ 8624: Համարել անվավել

Ուզգին Իվանի 1976 թ. ստացված թի Համարել անվավել

Գեղամ Վահրամի 1999 թ. ստացված թի Համարել անվավել



**Մասնակիցների ցանկ**

2021թ-ի մայիսի 24-ին ժամը 15:00-ին ք. ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Զովունի գյուղի վարչական ղեկավարի աշխատակազմի շենքում կազմակերպված ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Զովունի գյուղում բնակելի թաղամասի կառուցման նախագծի վերաբերյալ հանրային ծանուցման և քննարկումների (1-ին փուլի հանրային ծանուցում և քննարկումներ)

N	Անուն, ազգանուն	Կազմակերպություն/պաշտոն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1.	Սարգսյան Եսայի Բաղդասարյան	«Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ, ՀՄԿԱԶ փոխգործակցիչ	098131471	
2.	Ջրավ Եղիշյան	«ՄՊԿ» ՍՊԸ Հարսույզուհայեր	091968895	
3.	Մուսախանյան Զևարդ	ք. Զուրկեր	094340901	
4.	Չիմեն Խաչատրյան	առևտրային ընկերակազմ	097130875	
5.	Չիմեն Խաչատրյան	ք. Զուրկեր	098-66-20-13	
6.	Չիմեն Խաչատրյան	ք. Զուրկեր	093-280089	
7.	Ավետիսյան Արմեն	ք. Աշխատանք	098082052	
8.	Թորոսյան Արմեն	համ. աշխատանք	055-18-9374	
9.	Քաչառյան Կարեն	ք. Զուրկեր	094-83-4840	
10.	Քաչառյան Կարեն	աշխատանք	053-255-988	
11.	Քաչառյան Կարեն	Քաչառյան ընկերակազմ	098-11-90-90	
12.	Քաչառյան Կարեն	ք. Զուրկեր	093-03-9800	
13.	Չիմեն Խաչատրյան	աշխատանք		
14.	Արմենյան Գրիգոր	համ. աշխատանք	093-301580	
15.	Սարգսյան Եսայի Բաղդասարյան	«Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ, ՀՄԿԱԶ փոխգործակցիչ	091223690	
16.				
17.				
18.				
19.				
20.				



**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Զովունի գյուղում բնակելի թաղամասի կառուցման նախագծի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումների**

2021թ-ի մայիսի 24-ին, ժամը 15:00-ին ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Զովունի գյուղի վարչական ղեկավարի աշխատակազմի շենքում տեղի ունեցան **ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Զովունի գյուղում բնակելի թաղամասի կառուցման նախագծի** վերաբերյալ 1-ին հանրային քննարկումները՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն: Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակված է եղել <<Հայաստանի Հանրապետություն>> օրաթերթի 2021 թ-ի մայիսի 12-ի թիվ 85 (7526) համարում, որի պատճեն ներառված է Նախնական Գնահատման Հայտի փաթեթում:

Հանդիպմանը մասնակցում էին Զովունի գյուղի վարչական ղեկավարը, նախագծային ընկերության («Ռեֆորմ» ՍՊԸ), նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի մշակման և հանրային լուսմների կազմակերպման պատասխանատու ընկերության և նախագծի պատվիրատու ընկերության («Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ) ներկայացուցիչներ, ավագանու անդամներ, ինչպես նաև շահագրգիռ հանրության ներկայացուցիչներ: Մասնակիցների ցուցակը ստորագրություններով ներառված է Նախնական Գնահատման Հայտի փաթեթում:

Զովունի գյուղի վարչական ղեկավար **Ա. Ղարիբյանը** ողջունեց ներկաներին, ներկայացրեց հանդիպման նպատակը և խոսքը փոխանցեց «Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ ներկայացուցիչ **Մ. Նալբանդյանին**:

**Մ. Նալբանդյանը** ողջունեց մասնակիցներին և հայտնեց, որ հանդիպման նպատակն է **ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Զովունի գյուղում բնակելի թաղամասի կառուցման նախագծի** մասին այս պահի դրությամբ հասանելի տեղեկատվության, գաղափարի, ըդհանուր տեխնիկա-տնտեսական ցուցանիշների ներկայացումն ու քննարկումն է, ինչպես նաև առաջարկությունների արձանագրումը: Նա նշեց, որ հանրային քննարկման պահանջը սահմանված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 19 նոյեմբերի 2014 թվականի N 1325-Ն՝ <<Հանրային ծանուցման ել քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին>> որոշման դրույթներով: Նախատեսվող գործունեությունը համաձայն նշված օրենքի դասակարգվում է որպես Գ կատեգորիայի գործունեություն, որի համար օրենքով նախատեսված է 2 հանրային քննարկման կազմակերպում: Մ. Նալբանդյանը համառոտ ներկայացրեց հետագա ընթացակարգը, նշելով նաև որ հանրությունը և համայնքը պատշաճ կերպով ծանուցվել են:

**Մ. Նալբանդյանը** ներկաներին ներկայացրեց նախագծում ներգրավված կողմերին և նախագծման իրավական հիմքերն ու կարգավորող շրջանակները, նշելով որ «Մազնոլիա



Կոմֆորտ» ՍՊԸ-ն սահմանված կարգով՝ 30.04.21 թ-ին Եղվարդի համայնքապետարանից ստացել է թիվ 95 նախագծման թույլտվությունը, համաձայն որի իրականացվում են նախագծման աշխատանքները: Հողամասը, որտեղ նախատեսվում է իրականացնել կառուցապատումը, գտնվում է Զովունի 6-րդ փողոց 21 հասցեում և սեփականության իրավունքով պատկանում է «Մազնուլիա Կոմֆորտ» ՍՊԸ-ին: Հողամասի ընդհանուր մակերեսը շուրջ 3.3 հա է: Տարածքում նախատեսվում է կառուցել 18 բազմաբնակարան շենքեր, որոնք ստորին հարկերը նախատեսված են նաև գրասենյակային տարածքների համար: Ներկայացվեցին մի քանի հիմնական ցուցանիշ. 1) հողամասի ընդհանուր մակերեսը 33,270 ք.մ; 2) ընդհանուր կառուցապատման մակերեսը շուրջ 8881 ք.մ; 3) կանաչապատման մակերեսը 13,427 ք.մ կամ ընդհանուր տարածքի մոտ 40.4 տոկոսը; 4) բնակարանների քանակը 688 հատ; 5) բացօթյա ավտոկայանատեղի 186 հատ և ստորգետնյա ավտոկայանատեղի 303 հատ: Ընդհանուր շինարարական աշխատանքների ընթացքում կլինեն որոշակի ժամանակավոր ազդեցություններ շրջակա միջավայրի վրա՝ մասնավորապես աղմուկի, փոշու արտանետումից պայմանավորված, և ձեռնարկող ընկերության խնդիրն է այդ ազդեցությունները պահել թույլատրելի նորմաների սահմաններում: Հսկողություն նաև կիրականացվի համայնքի համապատասխան կառույցների կողմից, ինչպես նաև բնապահպանական տեսչական մարմնի կողմից: Էսքիզային մակարդակով նախագիծը արդեն հասանելի է, շուտով հասանելի կլինի նաև ավարտական նախագիծը: Մ. Նալբանդյանը խոսքը փոխանցեց նախագծող ընկերության ներկայացուցիչ Յ. Միերյանին:

**Յ. Միերյանը** ներկայացրեց մի քանի մանրամասներ առ այն, որ 13,7 հազ. ք.մ կանաչապատ տարածքում նախատեսվում է կառուցել 3 խաղահրապարակ, ինչպես մանկական այնպես էլ մեծահասակների համար (բասկետբոլի և ֆուտբոլի): Շինությունների վերգետնյա մասի մակերեսը կազմելու է 61,120 ք.մ, իսկ հասարակականի մասի մակերեսը՝ շուրջ 4,000 ք.մ:

**Հարց Ա. Բաղդյան** – Ի՞նչ հարկայնություն է նախատեսված շենքերի համար:

**Պատասխան Յ. Միերյան** – նախատեսված է մինչև 3 ստորգետնյա հարկայնություն և հիմնականում մինչև 8 վերգետնյա հարկայնություն:

**Հարց Ա. Ազիզյան** – Ե՞րբ է նախատեսվում սկսել աշխատանքները:

**Պատասխան Յ. Միերյան** – այս թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, որից հետո շինարարությունը կիրակացվի փուլային տարբերակով մինչև 4-5 տարի ժամանակահատվածով:

**Հարց Ա. Ազիզյան** – Արդյո՞ք այդ ժամկետները նույնն են, որոնք ներկայացվել էին հողամասը վաճառելիս ներկայացված բիզնես-պլանում:

**Պատասխան Յ. Միերյան** – նույն ժամկետներն են:

**Հարց Ա. Ազիզյան** – Քանի որ հողամասը վաճառվել է մեկ անձի առանց մրցույթի կադաստրային արժեքով, գնորդը պարտավորվել էր սոցիալական բնույթի ներդրումներ



կատարել համայնքի համար: Ներկայացվեց, որ կանաչապատ տարածքում կառուցվելու են 3 խաղահրապարակ, արդյո՞ք սոցիալական բնույթի ներդրումները մտնելու են համալիրի մեջ:

**Պատասխան Ա. Ղարիբյան** – կառուցապատողը բացի նախատեսված համալիրից և խաղահրապարակներից պարտավորվել է կատարել լրացուցիչ ներդրումներ՝ շուրջ 50 մլն ՀՀ դրամ և այդ աշխատանքները կատարվելու են նախատեսվող համալիրի տարածքից դուրս համայնքում:

**Հարց Ա. Ազիզյան** – Կա՞ն որևէ պատրաստ նախագծային փաստաթղթեր կապված լրացուցիչ աշխատանքների հետ:

**Պատասխան Յ. Մհերյան** – փաստաթղթերի պատրաստումը ընթացքի մեջ է:

**Հարց Ա. Ազիզյան** – Արդյո՞ք ուսումնասիրվել է շենքերի հիմքը:

**Պատասխան Յ. Մհերյան** – ուսումնասիրվել է, նույնիսկ այս պահին էլ են կատարվում ուսումնասիրություններ, որոշվել է գրունտների սեյսմիկ կարգը, կատարվել է նախնական գեոլոգիա, այս պահին յուրաքանչյուր շենքի նախատեսված հատվածում իրականացվում են հորատումներ նորից հստակեցնելու գրունտների կարգավիճակը:

**Հարց Գ. Բաղդասարյան** – Ե՞րբ է իրականացվելու 50 մլն-ի ներդրումը. շինարարության ավարտից հետո թե ընթացքում:

**Պատասխան Յ. Մհերյան** – ընթացքում:

**Հարց Գ. Հայրապետյան** – Ինչք՞ան են նախատեսված վաճառքի գները:

**Պատասխան Յ. Մհերյան** – Այս պահին դեռևս վերջնական հաշվարկներ չկան, դրանք կլինեն 750-850 ԱՄՆ դոլարի սահմաններում՝ 1 քմ-ի համար:

**Հարց Ա. Բաղդասարյան** – Սահմանվելու են արդյո՞ք առաջնահերթություններ Զովունի համայնքի բնակիչների բնակարանային կարիքները ապահովելու ուղղությամբ:

**Պատասխան Յ. Մհերյան** – Որպես այդպիսին, առաջնահերթություն չկա սահմանված, սակայն եթե համայնքն ինքը գույքագրի/ցուցակագրի իր առաջնահերթ կարիք և ցանկություն ունեցող բնակիչներին, ապա կառուցապատողը դա հաշվի կառնի իր վաճառքի պլանավորման մեջ:

**Լրացում Ա. Ղարիբյան** – Առաջիկայում, երբ որոշակիանան ներդրումային ծրագրի գործողությունները, համայնում մենք կկազմակերպենք հանդիպում և կցուցակագրենք բնակարան ձեռք բերելու ցանկություն ունեցող համայնքի բնակիչներին և տվյալները կփոխանցենք կառուցապատողին:

Ներկաները քննարկում էին բնակարանների վաճառքին վերաբերող հարցեր, ինչպես նաև վաճառքի ընթացքում համայնքի բնակիչներին զեղչերի տրամադրման հնարավորությունները:

**Հարց Ա. Պետրոսյան** – Ինչպե՞ս է լուծվելու կոմունիկացիաների հարցը: Օրինակ խմելու ջուրը վերցվելու է համայնքից թե նոր գիծ է տրամադրվելու՞ :

**Պատասխան Ա. Ղարիբյան** – տրամադրվելու է նոր ջրագիծ, ինչպես նաև նոր կոյուղատար:



**Հարց Գ. Բաղդասարյան** – Նախատեսվում է արդյո՞ք ծրագրով նոր դպրոցի կառուցում, թե նոր թաղամասի երեխաները սովորելու են Զովունի գյուղի դպրոցում:

**Պատասխան Ց. Մհերյան** – նոր դպրոցի կառուցում նախատեսված չէ, ենթադրվում է որ նոր ավելացած բնակիչներին պետք է սպասարկի գոյություն ունեցող դպրոցը:

**Հարց Ա. Բաղդասարյան** – Նախատեսվում է արդյո՞ք երաշխիք բնակարանների համար: Եթե օրինակ 10 տարի հետո շենքը տա նստվածք:

**Պատասխան Ց. Մհերյան** – նախագիծն անցնում է ինչպես պարզ, այնպես էլ համալիր պետական փորձաքննություն: Այսինքն նախագծերը, գեոլոգիական ուսումնասիրությունների և հաշվարկների հետ միասին պետք է հաստատվեն պետական փորձաքննական մարմնի կողմից:

**Հարց Ա. Ղարիբյան** – ինչքա՞ն սեյսմակայունություն է նախատեսվում:

**Պատասխան Ց. Մհերյան** – 9 բալ:

**Հարց Ա. Ազիզյան** – Ունի արդյո՞ք կառուցապատողը այլ նմանատիպ ներդրումային ծրագրի կամ կառուցապատման փորձառություն:

**Պատասխան Ց. Մհերյան** – Այո ունի: Մեկ այլ նմանատիպ ներդրումային ծրագիր իրականացնում է ք. Երևանում:

**Հարց Ա. Ազիզյան** – Կառուցապատման փուլում է թե՞ նախագծման:

**Պատասխան Ց. Մհերյան** – Նախագծման:

**Հարց Գ. Մնացականյան** – Ինչպե՞ս են լուծվելու համալիրի անվտանգության հարցերը, ի՞նչ հակահրդեհային միջոցներ են նախատեսված:

**Պատասխան Ց. Մհերյան** – ապահովվելու են հակահրդեհային բոլոր միջոցները, նույնիսկ անցնում ենք փորձաքննություն, իսկ ինչ վերաբերում է թաղամաս ազատ մուտքին, ապա մուտքը լինելու է բաց:

**Հարց Ս. Թորոսյան** – Ինչպիսի՞ սոցիալական, տնտեսական ազդեցություն կունենա այս ներդրումային ծրագիրը համայնքի վրա:

**Պատասխան Ց. Մհերյան** – Կարծում ենք նախատեսվող կառուցապատման աշխատանքները էական տնտեսական զարգացում կապահովեն համայնքի համար և լրացուցիչ խթան կլինեն նաև տնտեսության այլ ճյուղերի զարգացման համար:

**Լրացում Մ. Նալբանդյան** – Ինչպես նշվեց, նախատեսվող բնակելի թաղամասում նախատեսված են 688 բնակարաններ, ինչը նշանակում է այդքան ընտանիք առաջանահերթ կօգտվի համայնքում գործող սպասարկման ծառայություններից, խանութ-սրահներից և դա շրջայական զարգացում կապահովի նաև այլ ոլորտներում ու լրացուցիչ խթան կհանդիսանա համայնքի տնտեսական աշխուժության ուղղությամբ:

Ներկաները քննարկում էին նոր թաղամասի ազդեցությունը համայնքի բնակիչների բարեկեցության մակարդակի բարձրացման վրա, ինչպես նաև բնակարանների վաճառքի հետ կապված հարցեր:



**Հարց Ա. Բաղդյան** – Նախատեսվում է արդյո՞ք լրացուցիչ աշխատատեղերի ստեղծում համայնքի բնակիչների համար:

**Պատասխան Յ. Մհերյան** – Ներդրումային ծրագրի իրականացմամբ նախատեսվում են ստեղծել մեծ թվով աշխատատեղեր և բնականաբար պահանջարկը ապահովվելու համար առաջնահերթությունը կտրվի համայնքի բնակիչներին՝ ինչպես մասնագիտական ծառայությունների մատուցման, այնպես էլ բանվորական կամ արհեստավոր անձնակազմի հավաքգրման հարցերում:

Ծավալվեց ընդհանուր քննարկում և մտքերի փոխանակում, որի ընթացքում հանրային քննարկման մասնակիցները ընդհանուր առմամբ ողջունեցին բնակելի թաղամասի կառուցման նախաձեռնությունը, այն գնահատեցին շատ կարևոր համայնքի տնտեսական զարգացում ապահովելու տեսանկյունից և հույս հատնեցին, որ ներդրողներն ու կառուցապատողները հաշվի կառնեն հանրային քննարկման ընթացքում բարձրացված հարցերն ու պայմանավորվածությունները:

Այլ հարցեր չհնչեցին և համայնքի վարչական ղեկավարի առաջարկով քննարկումների վարողն ամփոփեց հանդիպումը:

**Մ. Նալբանդյանը** շնորհակալություն հայտնեց ներկաներին և ամփոփեց հանդիպումը:

**Քննարկումների վարող՝**

«Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ-ի ենթակապալառու կազմակերպության ներկայացուցիչ

Մ. Նալբանդյան

**Քննարկումների արձանգրող՝**

«Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ-ի ենթակապալառու կազմակերպության ներկայացուցիչ

Յ. Բաբայան

**Ձեռնարկողի ներկայացուցիչ՝**

«Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ-ի ենթակապալառու կազմակերպության ներկայացուցիչ

Յ. Մհերյան

**Քննարկումների պատասխանատուի ներկայացուցիչ՝**

Զովունի գյուղի վարչական ղեկավար՝

Ա. Ղարիբյան

10.6 Հավելված 6. Զովունիի քաղաքապետարանի նախնական համաձայնությունը



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿՎԱՐԴ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդ համայնք,  
գ. Զովունի, 1 փողոց, 133  
Հեռ. (0224) 6-00-47

24.05.2021

N 4

«Մազնոլիա Կոմֆորտ» ՍՊ ընկերության տնօրեն  
պարոն Ա. Ավետիսյանին

Հարգելի պարոն Ավետիսյան,

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2021թ-ի մայիսի 24-ին ժամը 15:00-ին ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Զովունի գյուղի վարչական ղեկավարի աշխատակազմի շենքում կայացել են ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Զովունի գյուղում բնակելի թաղամասի կառուցման նախագծի վերաբերյալ հանրային ծանուցում և քննարկումներ, որի ընթացքում նախագծի հեղինակների և այլ մասնագետների կողմից ներկայացվել և հանրային քննարկման մասնակիցների հետ քննարկվել է վերոհիշյալ նախագիծը:

Ներկայացված նախագծի և քննարկման արդյունքների հիման վրա Զովունիի վարչական ղեկավարի աշխատակազմի անունից սույնով տալիս եմ Զովունիի նախնական համաձայնությունը ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Զովունի գյուղում բնակելի թաղամասի կառուցման նախագծին:

Զովունի գյուղի վարչական ղեկավար



Ա. Ղարիբյան

## 10.7 Լրամշակումների վերաբերյալ ամփոփ տեղեկագիր

### ԱՍՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ

«Մազնուլիա Կոմֆորտ» ՍՊԸ կողմից Զովունիում բնակելի թաղամասի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ ՆԳՀ) լրամշակումների վերաբերյալ  
*(հիմքը՝ ՀՀ ՇՄ նախարարի տեղակալի 23.06.2021թ-ի N 3/26.6/8596 գրությամբ ներկայացված առաջարկություններ և դիտողություններ)*

**Զեռնարկողի քննիչանուր դիտարկում.** Հայտի վերաբերյալ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից ստացված դիտողությունների և առաջարկությունների փաթեթում ներառված ՀՀ շրջակա միջավայրի նախարարության դիտողություններն ու առաջարկությունները հիմնականում հակասում են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով ՆԳՀ-ի կազմի/կառուցվածքի համար սահմանված պահանջներին: Այդ առաջարկություն/դիտողությունները ոչ թե հայտի լրակազմման և լրամշակման համար «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներ են, այլ հիմնականում նախագծման և շինարարության փուլի պահանջներ են, որոնց համապատասխանությունը սահմանված քաղաքաշինական/արտակարգ իրավիճակների/ավիացիոն նորմերին դիտարկվում են այլ համաձայնեցումների և փորձաքննությունների շրջանակներում, համապատասխան պետական լիազոր կառույցների կողմից: Խնդրում եմ և հորդորում հետայսու առաջնորդվել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի տրամաբանությամբ և լինել ու մնալ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության իրավասությունների և գործառույթների տիրույթում, այլապես տպավորություն է ստացվում որ հայտը ներկայացվել է ոչ թե «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված փորձաքննության, այլ համալիր կամ տեխնիկական բնույթի այլ փորձաքննության: Միաժամանակ խնդրում ենք պատշաճ և բավարար կերպով ուսումնասիրել հայտը՝ նախքան դիտողությունները գրելը և ՆԳՀ-ը Զեռնարկողին վերադարձնելը, քանի որ մի շարք դիտողություններին համապատասխան տեղեկատվությունը հայտում առկա է, սակայն ինքնանպատակ ձևով դրանք ներառվել են դիտողությունների ցանկում: Բացի դա, կարծում ենք փորձաքննական կենտրոնի առանձին մասնագետները ՆԳՀ-ը դիտարկելիս պետք է առաջնորդվեն ոչ թե սեփական հնարավոր նեղ քաղաքաշինական ոլորտի փորձով ու գիտելիքներով, այլ բացառապես «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով ՆԳՀ-ի համար սահմանված պահանջներով և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ի իրավասություններով/գործառույթներով՝ խուսափելու համար պետական տարբեր գերատեսչական կառույցների իրավասությունների խառնաշփոթ ստեղծելով:



**Ձեռնարկողի տեխնիկական դիտարկում.** Խնդրում ենք հնարավորության դեպքում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության դիտողությունների տեքստը Ձեռնարկողին տրամադրել մատչելի/օգտագործելի ֆորմատով և պատշաճ համարակալմամբ: Դա կօգնի Ձեռնարկողին կազմել ամփոփ տեղեկագիրն առավել արդյունավետ, սեղմ ժամկետներում, ինչը օգտակար կլինի նաև ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ի համապատասխան փորձագետի համար՝ լրամշակումները համադրել-ստուգելու գործընթացում:

Ստացված դիտողություններ	Ձեռնարկողի պատասխան	Լրամշակման բնույթը և հղումը՝ ՆԳՀ-ի տեքստին
<b>ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն</b>		
<ul style="list-style-type: none"> <li>- բնակելի շենքերի ջրամատակարարումը, համաձայն տեխնիկական պայմանի, կկազմակերպվի տարածքի հարևանությամբ անցնող քաղաքային ջրատարից, սակայն հստակեցված չէ ջրատարին միանալու եղանակը</li> <li>- կոյուղաջրերի և կենցաղային ջրերի արտաքին ջրահեռացումը, համաձայն տեխնիկական պայմանի, նախատեսվում է իրականացնել հարևանությամբ կոլեկտորին միացմամբ, հստակեցված չէ կոլեկտորին միանալու եղանակը</li> <li>- մակերևութային ջրերի հեռացումը, համաձայն տեխնիկական պայմանի, նախատեսվում է իրականացնել միացումը հարևանությամբ անցնող հեղեղատարին, հստակեցված չէ հարևանությամբ անցնող հեղեղատարին միացնելու եղանակը</li> </ul>	<p>Հիշյալ 3 հարցադրումները առնվազն տարօրինակ հարցադրումներ են և բացարձակապես անընդունելի՝ առնվազն ՀՀ ՇՄ նախարարության գործառույթների, &lt;&lt;ՇՄԱՓԿ&gt;&gt; ՊՈԱԿ-ի իրավասությունների, ինչպես նաև &lt;&lt;ՇՄԱԳ և փորձաքննության մասին&gt;&gt; ՀՀ օրենքի տրամաբանության տեսանկյունից:</p> <p>Բնապահպանական/շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից առնվազն տարակուսելի է թե ինչ է նկատի առնվել &lt;&lt;...քաղաքային ջրատարին կոյուղատարին և հեղեղատարին միանալու եղանակ...&gt;&gt; ասելով: Հարցադրումներն այս փուլում ՆԳՀ-ի մասով անընդունելի են հատկապես նաև այն համատեքստում, որ դա</p>	<p>4.3 &lt;&lt;Ջրամատակարարում և ջրահեռացում&gt;&gt; բաժնում ներկայացված է բավարար և ամփոփ տեղեկատվություն ջրամատակարարման, ջրահեռացման, հեղեղատար կոյուղու միացման վերաբերյալ այնքանով, որքանով անհրաժեշտ է Նախնական Գնահատման Հայտի համար՝ ելնելով &lt;&lt;ՇՄԱԳ և փորձաքննության մասին&gt;&gt; ՀՀ օրենքի տրամաբանությունից:</p>

	<p>աշխատանքային նախագիծ փուլում մշակվող լուծումներ են որոնք կարգավորվում են քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նախագծային լուծումների համապատասխանությունը նշված փաստաթղթերին հստակեցվում է քաղաքաշինական փորձաքննության ընթացքում: Խնդրում եմ այս և հետագա նմանատիպ դեպքերում առաջնորդվել բացառապես «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով և տրամաբանությամբ, որով նախնական փորձաքննության փուլի համար մանրամասը աշխատանքային նախագիծ և հետևաբար նախագծով մշակվելիք քաղաքաշինական լուծումները նախնական գնահատման հայտում ներառելու պահանջ չկա:</p>	
<p>Հայտի «Թափոնների առաջացում և կառավարում» բաժնում ներառել նախատեսվող գործունեության ընթացքում առաջացող թափոնների բնութագրերը (քանակ, կազմ, վտանգավորության դաս), ինչպես նաև հայտի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նորմատիվաիրավական կազմը» բաժնում ճիշտ նշել ՀՀ</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Թափոնների մասին տեղեկատվությունն ավելացվել է 6.1.4 «Թափոնների առաջացում և կառավարում» բաժնում, իսկ «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ</p>

<p>կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշման անվանումը և կարգավորման առարկան</p>		<p>ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ» բաժնում իրավական ակտի անվանումը և կարգավորման առարկան խմբագրվել է</p>
<p>Ճշգրիտ կլիմայական նկարագիր կազմելու համար հայտում ներառել «Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ II-7.01-2011» (<a href="http://www.mud.am/lows/files/26_10_11_h/pdf">http://www.mud.am/lows/files/26_10_11_h/pdf</a>) նորմատիվային փաստաթղթում առկա «Եղվարդ» օդերևութաբանական կայանի կլիմայական տարրերի (օդի ջերմաստիճան, հարաբերական խոնավություն, մթնոլորտային տեղումներ, քամի) ամսական և տարեկան տվյալները՝ աղյուսակային տեսքով</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Հայտի 5.3 «Բնակլիմայական պայմաններ» բաժինը լրամշակվել է:</p>
<p>Միաժամանակ հաշվի առնելով ՀՀ-ում փոքր ավիացիայի զարգացման միտումները, համալիրի առավելագույն բարձր շինությունը, ինչպես նաև կառուցապատման ընթացքում կիրառվող վերամբարձ կռունկն ապահովել գիշերային մակնշումով՝ համաձայն Չիկագոյի կոնվենցիայի 14-րդ հավելված պահանջների: Շինարարությունում շահագործվող կռունկը պետք է անցած լինի անվտանգության տեխնիկայի փորձաքննության և գրանցված լինի «Տեխնիկայի անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ռեգիստրում</p>	<p>Ամենայն հարգանքով վերաբերելով փորձաքննական կենտրոնի յուրաքանչյուր փորձագետի աշխատանքին, այնուամենայնիվ չենք կարող ուղղակի հարցադրում չանել. Ինչպիսի առնչություն ունի կամ ունի առհասարակ որևէ առնչություն թե ոչ այս հարցադրումը ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կամ ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ի գործառույթների հետ? Ակնհայտ է, որ գերատեսչական իրավասությունների շփոթմունք կամ խառնաշփոթ կա ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ում, ինչը օր առաջ շտկելու անհրաժեշտություն կա: Պարզապես անընդունելի է ՀՀ</p>	<p>ՆԳՀ-ի 6.1.9 բաժնում ներկայացված է՝ <u>Շինարարությունում շահագործվող կռունկը պետք է անցած լինի անվտանգության տեխնիկայի փորձաքննության և գրանցված լինի «Տեխնիկայի անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ռեգիստրում:</u> Սա այն տեխնիկական անվտանգության պահանջն է, որն արտահայտվում է աշխատանքային նախագծի համապատասխան /շինարարության կազմակերպում/ բաժնում և համապատասխանությունը ՀՀ քաղաքաշինական օրենսդրության պահանջներին</p>

	<p>շրջակա միջավայրի նախարարության անունից այսպիսի առաջարկ կամ դիտողություն ներկայացնելը մեկ պարզ պատճառով. Այս հարցը բացառապես քաղաքաշինական և/կամ ավիացիոն բնագավառի պետական լիազոր մարմինների կարգավորման դաշտում է և այդ կառույցները հավանաբար կանդրադառնան այդ հարցերին այլ համաձայնեցումների և փորձաքննությունների շրջանակներում: Հորդորում ենք հետայսու լինել, մնալ և առաջնորդվել բացառապես օրենքով ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը և ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ին վերապահված իրավասությունների ու լիազորությունների շրջանակներով</p>	<p>ստուգվում է քաղաքաշինական փորձաքննության շրջանակներում և ոչ թե բնապահպանական:</p>
<p>Զրատարում վթարների և վերանորոգումների ժամանակ ջրամատակարարման անընդհատությունը ապահովելու, ինչպես նաև ներքին հակահրդեհային ջրաքանակ ապահովելու համար նախատեսել պահուստային բաքի տեղադրում, որը միաժամանակ կարգավորող դեր կատարում է</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>ՆԳՀ-ի 4.3 Ջրամատակարարում և ջրահեռացում բաժնում 2-րդ պարբերությունը լրամշակվել է համապատասխանաբար:</p>



<p>Նախատեսել հակահրդեհային հիդրանտ արտաքին հրդեհաշիջման համար: Ներքին հրդեհաշիջման համար հարկերում է հակահրդեհային կանգնակների վրա, համապատասխան խորշերում տեղադրել հակահրդեհային արկղեր, որոնցից յուրաքանչյուրի մեջ կանգնակների վրա կտեղադրվի փական հակահրդեհային ծորակով, ռետինե խողովակ, հրշեջ փող և 2 ձեռքի կրակմարիչներ: Հակահրդեհային ծորակները տեղադրել էլնելով յուրաքանչյուր կետում 1 ջրի շիթ ապահովելու պայմանից:</p>	<p>Ընդունվել է մասամբ, քանի որ Էջ 13-ում 4.1 Նախագծային և տեխնոլոգիական լուծումներ բաժնում առկա է տեղեկատվություն միջանցքների և հարկերում հակահրդեհային միջոցառումների վերաբերյալ,</p>	<p>Լրացուցիչ տեղեկատվություն է ավելացվել է նույն բաժնում</p>
<p>Կոյուղու ելքագծերի հորիզոնական հատվածների համապատասխան հեռավորությունների վրա նախատեսել մաքրիչներ: Կոյուղագծերի և ելքագծերի հորիզոնական հատվածներն պետք է ունենան համապատասխան թեքություններ համապատասխանաբար դեպի կանգնակներ և դիտահորեր:</p>	<p>Մանրամասը նախագծումը իրականացվելու է քաղաքաշինական նորմատիվային փաստաթղթերում ամրագրված պահանջներին համապատասխան, իսկ համապատասխանությունը կստուգվի քաղաքաշինական/համալիր փորձաքննության շրջանակներում: Հետևաբար սույն պահանջը այս համատեքստում առանձանցնել և սահմանելը ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից առնվազն տարակուսելի է:</p>	
<p>Էլեկտրաէներգիայի պահանջարկը շինարարության փուլում ապահովել ժամանակավոր տրանսֆորմատորային ենթակայանից</p>	<p>Չի ընդունվել:</p>	<p>Ինքնանպատակ պահանջ է, քանի որ &lt;&lt;4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում&gt;&gt; բաժնում նույն նախադասությունը ներկայացված է:</p>
<p>Աղյուսակով ներկայացնել շինարարության ժամանակ անհրաժեշտ</p>	<p>Ընդունելի է: Ներկայացված է եղել:</p>	<p>Զրամատակարարման</p>

<p>ռեսուրսների պահանջարկը՝ հիմնված աշխատանքների ծավալների և կատարման ժամկետների վրա</p>		<p>հաշվարկը ներկայացված է 6.1.3 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն բաժնում և անհրաժեշտ ռեսուրսների քանակը բերված է 4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում</p>
<p>Հնարավոր կեղտաջրերի առաջացման դեպքում հրապարակում ապահովել կեղտաջրերի հեռացման համար նախատեսված տարա, որտեղ կեղտաջրերի (բետոնաջրեր և այլն) հետերոզեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս հնարավոր կլինի շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը՝ հնարավոր կլինի օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում</p>	<p>Չի ընդունվել:</p>	<p>Առաջարկությունը որպես միջացառում նախատեսված է ՆԳՀ-ի 6.1.3 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն բաժնում, ինչպես նաև արտացոլված է 7.2 բաժնի աղյուսակի Թափոնների և նյութերի կառավարման պլանում</p>
<p>Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միջտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ</p>	<p>Չի ընդունվել:</p>	<p>Քանի որ արդեն իսկ 6.1.8 Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումներ և 6.1.9 Աշխատանքի անվտանգության և հակահրդեհային միջոցառումներում և Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումներում ներկայացված են</p>
<p>Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>ՆԳՀ-ի 6.1.8 բաժնի համապատասխան պարբերությունը լրամշակվել է:</p>
<p>Նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները</p>	<p>Առաջարկված գործողությունը</p>	

<p>(վերելակ) &lt;&lt;Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին&gt;&gt; ՀՀ օրենքով նախատեսված կարգով ներկայացնել տեխնիկական անվտանգության փորձաքննությունների</p>	<p>իրականացվելու է՝ անկախ սույն պահանջից, քանի որ վերելակներն անցնում են տեխնիկական փորձաքննության, առանց որի շենքը չի ընդունվում շահագործման:</p>	
<p>Տարածքի համար մշակված կանաչապատման և բարեկարգման նախագծի աշխատանքներն իրականացնել Եղվարդի քաղաքապետարանի հետ համաձայնեցված: Ներկայացնել կանաչապատման նպատակով օգտագործվող ծառատեսակները դիտարկվող լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին համապատասխան՝ /կանաչապատման աշխատանքների տեսակներով, տնկվող ծառատեսակները և թվաքանակը/: Տվյալ լանդշաֆտում ծառերի կաչողականությունն ապահովել պարտադիր ոռոգման և խնամքի պայմաններում</p>	<p>Եղվարդի քաղաքապետարանի հետ համաձայնեցումը ՆԳՀ-ում սահմանված է եղել: Տնկվող ծառատեսակների և քանակի վերաբերյալ տեղեկատվությունը ավելացվել է:</p>	<p>4.2 Բարեկարգում և կանաչապատում բաժինը լրամշակվել է և ներկայացվել են նախնական ընտրված ծառատեսակները՝ համապատասխան թվաքանակներով</p>
<p>Շինարարական աշխատանքների ավարտից հետո որպես փոխհատուցման միջոցառում նախատեսել՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- Բոլոր մակերևույթներն այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնել բերելով սկզբնական վիճակի</li> <li>- Ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացնել շին հրապարակից</li> <li>- Ծառերի և թփերի տնկման վայրը և քանակը համապատասխանեցնել կանաչապատման նախագծին</li> <li>- Ապահովել ծառերի և թփերի 90% կաչողականությունը</li> </ul>	<p>Ընդունվել են:</p>	<p>ՆԳՀ-ի 7.2 բաժնի աղյուսակում ավելացվել են 15,16,17,18 գործողությունները</p>
<p><b>ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն</b></p>		
<p>Հայտի «Բովանդակություն» բաժնում գլուխները և ենթակա կետերի համարակալումները (բացակայում են որոշ գլուխների ենթակետերը) լրացնել հերթական համարների տեսքով:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Բովանդակությունում և ողջ տեքստում համարակալումները շտկվել են</p>
<p>Հայտում ներառել տեղեկատվություն՝ հակահրդեհային անվտանգության միջոցառումների տարածքի ջրային ռեսուրսների մշտական ապահովման միջոցների վերաբերյալ (նախատեսել տարածքում հրշեջ հիդրանտի տեղադրում):</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Միջոցառումն ավելացվել է 6.1.9 «Աշխատանքի անվտանգության և հակահրդեհային միջոցառումներ» բաժնում</p>

<p>Բնակելի թաղամասի կառուցման նախագծման ժամանակ նախատեսել պաշտպանական կառույց(ներ)՝ բնակիչներին անհրաժեշտության դեպքում պատասպարելու նպատակով:</p>	<p>Ընդունելի է:</p>	<p>Հաշվի կառնվի մանրամասը նախագծման փուլում</p>
<p>Հայտի «3. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նորմատիվ իրավական կազմը» բաժնում (էջ 9) «ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ. թիվ 24-Ն հրաման՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Մեյսնակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» իրավական ակտն ուժը կորցրել է 08.01.2021թ.-ին:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ» բաժնում հղումը խմբագրվել է՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.12.2020թ. թիվ 102-Ն հրաման՝ ՀՀՇՆ II-6.02-2004 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն նախագծման նորմեր»</p>
<p><b>ՀՀ առողջապահության նախարարություն</b></p>		
<p>Առողջապահության նախարարությունում քննարկվել է Զովունիում բնակելի թաղամասի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը, որի վերաբերյալ դիտողություններ չկան: Միաժամանակ, իրականացվող աշխատանքների ընթացքում առաջարկում են պահպանել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:</p>	<p>Ընդունելի է: Նշված պահանջը վերաբերում է շինարարության փուլում սանիտարական կանոնների և նորմերի պահպանմանը:</p>	<p>Համապատասխան պահանջների կատարումը ներառված է եղել հայտի տարբեր բաժիններում:</p>
<p><b>ՀՀ Կադաստրի կոմիտե</b></p>		
<p>«ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հայտի համաձայն՝ բնակելի թաղամասի կառուցման աշխատանքները նախատեսվում են իրականացնել ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Զովունի բնակավայրում գտնվող 07-029-0020-0009 կադաստրային ծածկագրով և 3.327 հա մակերեսով հողամասում: ՀՀ, Կոտայքի մարզ, Եղվարդ համայնք, գյուղ Զովունի, 6-րդ փողոց, 21 հասցեում գտնվող 07-029-0020-0009 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողերի</p>	<p>Ընդունելի է:</p>	<p>Առաջարկն ընդունվել է ի գիտություն և նշված հողամասերի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ իրավահաստատող փաստաթղթերի ձևակերպումները և դրա արտացոլումը կադաստրային</p>

<p>գործառնական նշանակության 1.207106 հա մակերեսով և ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 2.12035 հա մակերեսով հողամասերի (ընդհանուր՝ 3.327141 հա) նկատմամբ գրանցված է «ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 21042021-07-0017 վկայական):</p> <p>Տեղեկացնում ենք նաև, որ ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 18-ի «ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Զովունի բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման ներդրումային ծրագրի իրականացման նպատակով հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին» N 355-Ա որոշման 4-րդ կետով ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի ղեկավարին առաջարկվել է սահմանված կարգով ապահովել սույն որոշման մեջ նշված 3.3274 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակության փոփոխության իրականացումը: Կադաստրային գործում նշված հողամասերի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ իրավահաստատող փաստաթղթեր առկա չեն:</p>		<p>գործում ընթացքի մեջ են:</p>
<p><b>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</b></p>		
<p>.....նախարարությունը ներկայացված նախնական գնահատման հայտի վերաբերյալ առարկություններ չունի՝ պայմանով, որ նախարարությանը ներկայացվող ՇՄԱԳ հաշվետվության հիմնական փուլում, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի պահանջների՝ հաշվետվությունում ներառված լինեն տվյալ տարածքում կատարված հնագիտական ուսումնասիրությունների եզրակացությունները:</p>	<p>Ընդհանուր առմամբ առաջարկությունն ընդունելի է, սակայն սույն կոնկրետ հայտի դեպքում այն կիրառելի չէ, քանի որ նախատեսվող գործունեությունը Գ) կատեգորիայի գործունեություն է, իսկ առաջարկությունը կարող է վերաբերվել և կիրառվել նախատեսվող այնպիսի գործունեության ձևերի, որոնց դեպքում ՆԳՀ-ից բացի</p>	

	<p>պահանջվում է մշակել նաև հաշվետվություն: Ի դեպ դա է հուշում նաև հղում արված հոդվածի համապատասխան կետով սահմանված սկզբունքը՝</p> <p><i>4) հաշվետվությունների լիարժեքության, հավաստիության և գիտական հիմնավորվածության ապահովումը.</i></p>	
<p>Միաժամանակ հայտնում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>ՆԳՀ-ի 7.2 Մոնիտորինգ բաժնի Ադ.7-ում ավելացվել է նոր 7-րդ կետ՝ ««Պատմամշակութային և հնագաիտական արժեքների կառավարում»»</p>